№ 252 ՈՒՐԲԱԹ, 13 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 13 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 252

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲԼԻ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։
Յայտարարութիւնների համար պէտք վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Շաբաթ, նոյեմբերի 14-ին, առաւ. ժ. 11-ին, ՑՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ
նշանակված է
Կովկասի Հայոց Դպրոցների Ուսուցիչների եւ Վարժուհիների Միութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ.
Օրակարգի խնդիրներն են՝
ա) Գործունէութեան տեղեկագիր և հաշւետւութիւն.
բ) Վերստուգիչ Յանձնաժողովի զեկուցումը.
գ) Ընտրութիւններ.
դ) Ընթացիկ հարցեր.
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
տп. 825. 2—1

ԱՆՀԵՏԱՑԵԼ Է
Ներկայ թւի հոկտեմբերի 18-ից Թիֆլիսի Մանթաշեան Առևտրական դպրոցի 17 տարեկան աշակերտ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԸ։ Թերևս գնացած լինի նա որպէս կամաւոր։ Դէպքից վշտացած ծնողները, դիմելով ընթերցողների մարդասիրութեանը, խոնարհաբար խնդրում են տղային տեսնող ու նրա մասին տեղեակ անձանց՝ չը մերժել տեղեկութիւններ յայտնել այս հասցէով. Тифлисъ, Бебутовская ул. д. № 42, кв. № 7.
տп. 824. 1—1

ՀՐԱՒԷՐ
Համաձայն Թեմական առաջնորդի կարգադրութեան, կիրակի, նոյեմբերի 15-ին, ցերեկը ժամը 12-ին նշանակված է Մողնու ս. Գէորգ եկեղեցու ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎ.
Օրակարգն է՝
1) Գայիանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութեան եռամեայ հաշւետւութիւնը (դրամական և ուսումնական)։
2) Նախահաշիւ 1915/16 ուս. տարվայ։
3) Ընտրութիւն հոգաբարձութեան անդամների և փոխանորդների։
Միաբան Մողնու ս. Գէորգ եկեղեցու՝
Յովհաննէս ք. Տէր-Գրիգորեան
Հոգաբարձութիւն
Ծանօթ.—Ժողովը օրինական է համարվում անկախ ծխականների թւից։
տп. (ш. о.) 819. 3—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բեռլինի համալսարանի պրոֆ. Պօզների։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի եւ կաշուի հիւանդութիւններով՝ առաւ. ժամը 10—12, երեկ. ժամը 4—6։ Սոլոլակ, Բարիչինսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
տп. (չ. ու. կ.) 806. 50—3

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խառն ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական Պ ՆԵՎՄՈԹՕՐԱԿՍՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարելը լուսաւորված ՌԵՆՏԳԵՆԵԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ու ժ. 9—10 ՁՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29.
տп. (ш. о.) 504. 100—87

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՈՐԱՏՕՐԻԱ
ԿԵՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ
Պլոմբ—ոսկուց, արծաթից, փարփորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պերեւլոկից։
(ш. о.) տп. 515. 100—70

ԲԺԻՇԿ
ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
Վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ մասնաւորապէս կոկորդի, քթի, ականջի հիւանդութիւններով։
Առաւօտեան ժամը 10—12-ը։
Երեկոյեան » 5—7 ը։
Бебутовская ул. № 26. 3-րդ օրիորդաց գիմնազիայի կողքին։
տп. 779. 50—15

Թիֆլիսի կոյրերի Հոգաբարձութեան Ակնաբուժարանի աւագ օրդինատոր
ԲԺՇԿՈՒՀԻ
ՍՕՖԻԱ ՄԻՐԶՕՅԵԱՆ
ընդունում է աչքի հիւանդութիւններից ամեն օր՝ ցեր. ժամը 1½-ից մինչև ժամը 3-ը։ Սերգիէվսկայա փող. № 1. Տելեֆոն № 16—67։
տп. 753. 50—21

ՅՈՒՆԱՍՏԱՆԸ ԵՒ ՆՐԱ ԲՌՆԱԾ ԴԻՐՔԸ

Յունաստանը շարունակում է պահպանել իր անորոշ դիրքը ներկայ համաշխարհային պատերազմի մէջ։

Ընդհանուր կարծիք է, թէ իբր յունական ժողովրդի ամբողջ համակրութիւնը և սէրը Ռուսաստանի և դաշնակիցների կողմն է. բայց թագաւորը և կառավարութիւնը գնում են ժողովրդի ցանկութեան և ձգտումների հակառակ։

Եւ թւում է, որ այդ կարծիքը ճիշդ է։ Յունաստանը սահմանադրական-պառլամենտական երկիր է և դժւար թէ թագաւորը և կառավարութիւնը կարողանային բացարձակ կերպով ժողովրդի կամքին հակառակ գնալ, եթէ միայն այդ կամքը բացորոշ և խիստ կերպով արտայայտվէր։ Նոյն կարծիքը մի քանի ժամանակ առաջ ռուսաց մամուլի մի մասը յայտնում էր և Բուլղարիայի մասին, այն է, թէ իբր բուլղարական ժողովուրդը ամբողջովին համակիր է Ռուսաստանին, բայց Ֆերդինանդ թագաւորը և կառավարութիւնը ժողովրդի կամքին հակառակ են գնում։ Եւ, սակայն, իրողութիւնը ցոյց տուեց, որ բուլղարական ժողովուրդը ոչ մի բողոք չարտայայտեց իր կառավարութեան դէմ և հանգիստ սրտով հաշտվեց այն մտքի հետ, որ, ինչպէս, բուլղարական ժողովուրդը դաւաճանութիւն և սոսկալի ապերախտութիւն է կատարում դէպի իր ազատարար Ռուսաստանը։

Եւ միթէ Յունաստանն էլ իր ազատութիւնը պարտական չէ Ռուսաստանին և Անգլիային. միթէ այս երկու պետութիւնների շնորհիւ չէր, որ Յունաստանը թօթափեց թիւրքական լուծը և դարձաւ անկախ պետութիւն։ Շատ ճիշդ է ասում մի ռուս թերթ, թէ 19-րդ դարի մեծ բանաստեղծի ստուերը դեռ սաւառնում է այն բլուրների վրա, ուր յաւիտենական հանգիստ են գտել Միսսոլունգի հերոսները։

Եւ միթէ Թիւրքիան չէ եղել և այսօր էլ չէ Յունաստանի անհաշտ թշնամին և նրա բարգաւաճման ու ծաղկման միակ խոչընդոտը։

Եւ սակայն, չը նայելով այդ ամենին, Յունաստանը վարանում է անցնել Ռուսաստանի և դաշնակիցների կողմը և աւելի թեքված ու յարված է Գերմանիայի և Թիւրքիայի կողմը։

Յունաստանը շատ լաւ գիտէ, որ եթէ Ֆրանսիան, Անգլիան իրանց նաւատորմերով պաշարեն յունական կղզիները, Յունաստանը սովամահ կը լինի, որովհետև նա չունի սեփական հաց և նրա ծովային ծաղկեալ վաճառականութիւնը կոչնչանայ։ Երկրի ազգաբնակութեան մի երրորդ մասը ապրում է կղզիների վրա. յունական նաւատորմիղը անզօր է պաշտպանելու այդ կղզիները և Յունաստանի ամենահարուստ և մեծ քաղաքները ենթակայ կարող են լինել շատ հեշտութեամբ դաշնակիցների պատերազմական նաւերի ռմբակոծման։

Այս ամենը շատ լաւ գիտէ Յունաստանը և սակայն նա վարանում է դեռ անցնել դաշնակիցների կողմը և դժուարանում է որոշ դիրք բռնել։

Պատճառը այժմ պարզ է ֆրանսիական անպաշտօն մինիստր Դենի-Կոշէնի այցելութիւնից յետոյ։ Նա գտնում է, որ Յունաստանը դեռ համոզված չէ, որ դաշնակիցները Գերմանիայից աւելի հզօր են և յոյս ունի, որ իր ազգային իղձը կարող է իրագործել, այն է Մակեդոնիան ստանալ առանց պատերազմի, առանց արիւն թափելու, շնորհիւ գերմանական կայսրի բարեհաճութեան։

Հէնց դրա մէջ էլ պէտք է որոնել գլխաւոր պատճառը Յունաստանի վարանման։ Որքան և մեծ լինի նրա համակրութիւնը, պատմական աւանդութիւնը դէպի Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան, բայց ամենից առաջ նա իր սեփական օգուտն է մտածում։ Նա յոյս ունի, որ անորոշ կամ չէզոք դիրք բռնելով կարող է ստանալ այն ամեն օգուտը, որ կարելի կը լինէր ձեռք բերել պատերազմով։ Եթէ նա համոզված լինէր, որ դաշնակիցները յաղթող կը հանդիսանան, անկասկած է, որ նա դաշնակիցների կողմը կանցնէր այժմ իսկ։

Ի հարկէ, դաշնակիցները հնարաւորութիւն ունեն ստիպել Յունաստանին անցնել իրանց կողմը, բայց նրանք ևս դեռ չեն կամենում խիստ միջոցներ ձեռք առնել։

Հ. Ա.

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ռիգայի զօրաճակատի վրա, Կանգէրից դէպի արևմուտք գերմանացիք տեղ-տեղ ստիպված էին նորից յետ քաշվել։ Դաշէն կղզու հարաւային վերջաւորութեան դէմ գերմանացիք երէկ յարձակում գործեցին և գրաւեցին Բերզեմիւնդէն։ Ստանալով օգնութիւն, մեր զօրքերը հակայարձակման դիմեցին և ետ խլեցին Բերզեմիւնդէն։

Դվինայի ձախ ափին, Իլուկստից դէպի հիւսիս մենք կռւով գրաւեցինք Եանօպօլ դաստակերտը։

Դվինսկի մօտ թնդանօթաձգութիւն է։

Սվենտէն կղզուց դէպի հիւսիս գերմանացիք անյաջող հակայարձակում գործեցին մեր գրաւած խրամատների դէմ։

Ռիգայի ծոցի մօտից մինչև Պրիպետա գետը հանգիստ է։

Ստիրի գետի ձախ ափին, Ն. Պօդչերեվիչի գիւղի շրջանում տեղի են ունենում կատաղի ընդհարումներ։

Կօլկինիչի գիւղի մօտ կռիւը շարունակվում է։

Գալիցիայի զօրաճակատի վրա փոփոխութիւն չը կայ։

ՀՌՈՄ.—Գլխաւոր բանակից տեղեկացնում են.

Նորագոյն տեղեկութիւնները ճշտում են Օսլավիայի մօտ նոյեմբ. 7-ին և 8-ին տեղի ունեցած կռիւների կարևորութիւնը։ Երէկ այդ ռազմավայրում թշնամին այլևս չէր գործում յախուռն յարձակումներ և մեր զօրքերը հնարաւորութիւն ունեցան ամրանալ իրանց գրաւած դիրքերում։ Գորիցայում մենք շարունակեցինք առաջանալ և ձեռք ձգեցինք մի լեռ, որը պահեցինք մեր ձեռքում, չը նայած թշնամու մրրկային կրակին։ Կարսոում, թշնամու անյաջող յարձակումները վանելուց յետոյ, ամբողջ զօրաճակատի վրա կռիւը վերսկսվեց նոր եռանդով։ Մենք գրոհ տալով վերցրինք մի ուժեղ ամրութիւն ս. Մարտին եկեղեցու մօտ։ Երէկ մեր վերցրած գերիների թիւը հասաւ 93-ի, որոնցից 7-ը օֆիցեր են։

ՓԱՐԻԶ.—Պատերազմաբեմի վրա զգալի փոփոխութիւններ չը կան։

ՀԱՅԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 նոյեմբերի

ԲՈՒԽԱՐԵՍՏ.— Սօֆիայից հաղորդում են, որ բոլոր թիւրքահպատակ հայերը բռնութեամբ մտնում են բուլղարական զօրքի մէջ։ Թիւրքաց զօրքից փախած 15 հայեր նորից յանձնվեցին Թիւրքիային և, հաւանօրէն, մահացրված են։ Մինչև 55 տարեկան հայերին բուլղար իշխանութիւնները հարկադրում են խրամատներ փորել։

ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 նոյեմբերի

ԹԵՀՐԱՆ.— Պարսից կառավարութիւնը պաշտօնական նոտաներով իրազեկ արաւ ռուսաց և անգլիական դեսպաններին, որ Ռուսաստանի և Անգլիայի հետ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու առիթով մայրաքաղաքի փոխադրութեան ծրագիրը նա թողնում է անգործադրելի։

ԼՈՆԴՈՆ.— Համայնքների պալատ։ Այն հարցին, թէ ստացվե՞լ է, արդեօք, պաշտօնական հաղորդագրութիւն Շիրազի բրիտանական հիւպատոսի և պարսկական պետական բանկի վերատեսչի կալանաւորելու մասին, Գրէյը պատասխանեց գրականապէս և յայտնեց, որ այդ անձանց ձերբակալութիւնը և նրանց գոյքերի յափշտակութիւնը կատարվել են ժանդարմների ձեռքով՝ առանց պարսից կառավարութեան գիտութեան։

Ապա Գրէյը յայտնեց, որ ժանդարմերիան, ղեկավարվելով իր օֆիցերներից և օտարազգիներից, բացարձակ ապստամբվել է պարսից կառավարութեան դէմ և կտրել է հեռագրաթելերը։ Գրէյն աւելացրեց, որ, ստացված տեղեկութիւնների համաձայն, այն ամենը, ինչ տեղի ունեցաւ Պարսկաստանում, եղաւ պարսից կառավարութեան կամքի հակառակ, որ ցաւում է ժանդարմերիայի և նրա օֆիցերների գործելակերպի համար։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 նոյեմբ.

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ի նկատի ունենալով, որ հրաման արձակվեց զինուորական ծառայութեան կոչելու հինգ կրտսեր հասակների 2-րդ կարգի երկրապահներին և վերացնելու ընտանեկան արտօնութիւնները 1896 թ. ծնվածներին զէնքի կոչելիս, ներքին գործերի մինիստրութիւնը առաջարկութիւն ներկայացրեց մինիստրների խորհրդին այն մասին, թէ անհրաժեշտ է վերացնել ընտանեկան դրութեան առիթով այն ժամանակամիջոցները, որ Բարձրագոյն՝ 1915 թ. մարտի 15-ի հրամանով տրվելու են 1915 և 1916 թ. թ. զինուորակոչութեան ժամանակ։

ԼՈՆԴՈՆ.—Գրէյը համայնքների պալատում յայտնեց, որ ամեն հնարաւորը արված էր սերբ ազգաբնակութեանը սպառնացող սովից պաշտպանելու համար և որ բրիտանական կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում դաշնակիցների հետ միասին, որպէսզի իր ժամանակին բաւական քանակութեամբ մթերքներ մատակարարվեն սերբ ազգաբնակութեան համար։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ.—Հաագայից տեղեկացնում են, որ Բրատեբֆէլդում, Լայպցիգից ոչ հեռու, այրվել են «Ցեպպելինների» 2 սրահ։ Մի «Ցեպպելին» ևս այրվել է։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Յունաց միսսիան հերքում է լրագրական տեղեկութիւնները, թէ իբր աւստրո-գերմանական մի պատուիրակութիւն, որին մասնակցում են կոմս Գոլուխովսկին և կոմս Բերխտոլդը, եկել է Աթէնք. ոչ մի աւստրո-գերմանական պատուիրակութիւն Աթէնքում չը կայ։

ԼՈՆԴՈՆ.—Արտաքին գործերի մինիստրութիւնը յայտնում է, որ ոչ մի յունական նաւ չէ բռնվել և չէ բռնվում Միացեալ Թագաւորութեան նաւահանգիստներում և որ ոչ մի յունաց նաւատորմի պաշարում գոյութիւն չունի ներկայումս։

ԱԹԷՆՔ.—Ստացված տեղեկութիւնների համաձայն, համաձայնութեան պետութիւնների նոտան, որ երէկ կէսօրին յանձնվեց կառավարութեանը, առաջարկում է պաշտօնապէս ձգել քանիցս արված յայտարարութիւնները և խոստումները, որպէսզի ամեն մի թիւրիմացութիւն վերանայ։ Նոտայի մէջ աւելացված է, որ հէնց որ այդ հաւաստիացումները տրվեն, դաշնակից մեծ պետութիւնները բաղդաւոր կը լինեն նորից երեան հանելու բարեացակամ վերաբերմունք դէպի Յունաստանը։

Երէկ Դենի-Կոշէնը նախաճաշեց թագաւորի մօտ, որ հասկացնել տուեց, թէ յունական կառավարութիւնը բարեացակամ է վերաբերւում կէսօրին յանձնված քառեակ համաձայնութեան նոտային։ Ենթադրվում է, որ յոյն կառավարութիւնը լիովին կը բաւարարէ մեծ պետութիւնների ցանկութիւնները։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Յունաց միսսիան թագաւորական կառավարութիւնից պատուիրագրութիւն ստացաւ կտրուկ կերպով հերքելու մի քանի օտարերկրեայ մայրաքաղաքներից ստացված այն հեռագրական տեղեկութիւնը, թէ իբր Կրետէ կղզում բռնկվել է յեղափոխական շարժում։ Ամենուրեք յունաց թագաւորութեան մէջ առաջվայ նման տիրում է լիակատար հանգստութիւն։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Պրինց Կարլը կնոջ հետ ճաշ տուեց ի պատիւ Կարմիր Խաչի կոնֆերենցիայի ռուս պատգամաւորների։

ԼՈՆԴՈՆ.—Լրագրական տեղեկութիւնների համաձայն՝ Լոնդոն է եկել ֆրանսիական զինուորական մինիստրի օգնական Տօմանը։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Վերադարձաւ պաշտօնավարական ճանապարհորդութիւնից ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան կառավարիչ Տրեպովը։

Ներքին գործերի մինիստրութիւնը դիմեց բոլոր այն վարչութիւններին, որոնց մէջ կան կրթական հաստատութիւններ, մատնանշելով որ 1916 թ. կարող են զէնքի կանչվել այն երիտասարդները, որոնք զինուորական ծառայութեան պէտք է ներկայանան 1918 թ. և որ ժամանակամիջոցներ ուսումը աւարտելու համար տալու են գաւառական և քաղաքային զինուորակոչական ատեաններ ըստ ուսանողների բնակատեղիի։ Ժամանակամիջոցը տալու մասին յայտարարութիւններ պէտք է տրվեն ոչ ուշ մինչև 1916 թ. յունվարի 1-ը։ Օտարերկրեայ կրթական հաստատութիւններում ուսանողներին ժամանակամիջոցներ չեն տրվի։

ՌՈՒՍԱԿԱՆ ՆՈՐ ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
11 նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Ի գիտութիւն լրագիրներին։ Որպէսզի ըստ հնարաւորութեան շատ տեղեկութիւններ տարածվեն առաջիկայ պատերազմական փոխառութեան մասին, ցանկալի է կրկնել մի քանի անգամ ստորև բերված ծանօթութիւնը այն հրատարակութիւնների մէջ, որոնք ստանում են Պ. Հ. Գ. հեռագիրները.—

Հինգ օրվայ ընթացքում, սկսած նոյեմբերի 16-ից մինչև 20-ը, լինելու է ստորագրութիւն պետական բանկում, նրա գրասենեակներում, բաժանմունքներում և պետական գանձատներում, խնայողական գանձարաններում, զեմստվային գանձարաններում, միութիւններում, փոխատու-խնայողական ու վարկային ընկերութիւնների մէջ, մասնաւոր բանկերում, նրանց բաժանմունքներում և բանկային գրասենեակներում՝ 1915 թ. 5 1/2 %-ային պատերազմական փոխառութեան համար, որ բաց է թողնվում մի միլիարդ ռուբլու իսկական դրամագլխով և որ ազատ է դրամագլուխներից առնվող տուրքից։ Փոխառութեան օբլիգացիաները լինելու են 50, 100, 500, 1000, 5000, 10,000 և 25,000 ռուբլի արժողութեան, ըստ որում կարող են լինել անուանական ևս։ Այդ առանձնապէս կարևոր է կորցնելու, գողութեան կամ ոչնչացման դէպքում։

Բոլոր օբլիգացիաները բերում են տարեկան 5 ր. 50 կ. ամեն մի 100 ռուբլու հանդէպ։ Տոկոսները կը վճարվեն երկու անգամ, կէսը մայիսի 1-ին և կէսը նոյեմբերի 1-ին ամեն տարի, պարբերաբար։ Առաջին վճարումը կը լինի 1916 մայիսի 1-ին։ Այդ եկամուտից ոչ մի տուրք չէ առնըվելու յօգուտ պետութեան և ամեն մի օբլիգացիա կը վաճառվի հարիւր ռուբլուն 5 ռուբլի զիջումով։

Պետական գանձատունը պարտաւորվում է ետ գնել բոլոր օբլիգացիաները՝ ամեն մինը 100 ռուբլով՝ տաս տարուց յետոյ։ Ծախսելով 95 ր. ամեն մի 100 ռուբլանոց օբլիգացիա ձեռք բերելու համար, գնողը տաս տարվայ ընթացքում ստանալու է 55 ր. եկամուտ։ Ներկայացնելով առ 1-ն նոյեմբերի 1925 Թ. իր օբլիգացիաները, տէրերը ամեն մի հարիւր ռուբլանոց օբլիգացիայի դէմ, որն իրանք գնել են 95 ռուբլով, կը ստանան ետ 100 ռուբլին լիովին։

Օբլիգացիաների առանձին առաւելութիւնը կայանում է նրանում, որ դրանք ընդունվելու են արքունի կալուածների ժամանակ իբրև գրաւական։ Եթէ 1916 Թ. նոր փոխառութիւններ բաց թողնվեն, ներկայ փոխառութեան օբլիգացիաները ունեցողներն իրաւունք կը ունենան փոփոխել իրանց օբլիգացիաները նոր, հաւասար արժէքի թղթերի հետ՝ առանց որևէ յաւելեալ վճարի։

Պետական խնայողական գանձարկղներում գնված օբլիգացիաները կարող են պահվել հէնց այնտեղ։

Մինչև 1925 Թ. նոյեմ. 1-ը պետութիւնը հրաժարվում է ետ գնել օբլիգացիաները։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

✦ «Р. Сл.»-ին հեռագրում են Աթէնքից, որ Կոնստանտին Թագաւորը Կիտչեներին ընդունելիս վստահեցրել է նրան, թէ Յունաստանն անկեղծօրէն հակված է բարեացակամ չէզոքութիւն պահպանելու քառակ համաձայնութեան վերաբերմամբ և որ յոյն զօրքերը երբէք հանդէս չեն գայ համաձայնութեան պետութիւնների դէմ։ Անգլիական դեսպանատան մէջ կայացած նախաճաշին Կիտչեները ասաց, որ նա անյողդողդ հաւատում է դաշնակիցների վերջնական յաղթութեանը, միայն նա նախատեսում է, որ պատերազմը շատ է ձգձգվելու։ Դեսպանների հետ խօսելիս՝ Կիտչեները յայտնել է, որ անգլիական մեծ թւով զօրքեր ճանապարհին են և դիմում են դէպի Բալկանները։

✦ Անգլիան բաց է թողել բռնված յունական շոգենաւերը։

✦ «Vorwärts» և «Hamb. Zeit.» ազդեցիկ լրագիրները գրում են, որ Գերմանիան այժմ առաջինը պէտք է հարց բարձրացնէ հաշտութեան բանակցութիւնների մասին. յետոյ ուշ կը լինի։

✦ Ինչպէս հաղորդում են, Վիլհէլմ կայսրի Կ. Պոլիս գնալու գլխաւոր նպատակն է առաջ բերել պանիսլամական սրբազան պատերազմ Ասիայում և Աֆրիկայում։

✦ Լուրերի համաձայն, 20,000 լաւ զինված ալբաններ թիւրք և գերմանացի օֆիցերների ղեկավարութեամբ կարգելու են սերբերի նահանջի ճանապարհը դէպի Ալբանիա։

✦ «Р. В.»-ի ստացած տեղեկութիւնների համաձայն, բուլղարներն ամրացնում են Վելէսը, Ուսկիւբը, Տէտովօն և Կոստիվարը։

✦ Սերբ զօրքին աջողվել է կտրել Նիշի և Սօֆիայի հաղորդակցութիւնը։ Այդ լուրի թերթեան առիթով «Р. У.»-ն խորհուրդ է տալիս պատրանքներով չը տարվել, որովհետև սերբերի դրութիւնը դարձեալ մնում է կրիտիկական, որովհետև նրանք շրջապատված են երեք կողմից։

✦ Տեղեկութիւններ են ստացվել, որ Ջէմալ-փաշան ապստամբեցրել է Սիրիայի արաբներին և դրուզներին։ Նա մտադիր է իրան Սիրիայի սուլթան հռչակել։ Այդ բանը մեծ յուզմունք է պատճառում Կ. Պոլսում։

✦ Ինչպէս հեռագրում են Պարիզից, ըստ գերմանական աղբիւրների Բենեդիկտոս XV պապը դրական քայլեր է անում կռւող պետութիւններում, որպէսզի Ծննդեան առիթով հաստատվի 5-օրեայ զինադադար։

✦ Ֆրանսիական կառավարութիւնը վճռել է նոր խոշոր ուժեր ուղարկել Սոլուն։

✦ «Р. У.»-ին հաղորդում են, որ Զարտօրիյսկի մօտ թշնամին 2 օրում կորցրել է 20,000 մարդ։

✦ «Р. Сл.»-ին հեռագրում են, որ աւստրո-գերմանացիք սերբիական զորաճակատի վրա 5 օրում կորցրել են 25,000 մարդ։

✦ Սերբիական զինուորական մինիստրը եկել է Սալօնիկ յունաց գլխաւոր շտաբի հետ խորհրդակցելու համար։

✦ «Берл. Тагб.»-ը հաղորդում է, որ բուլղարական զինուորական մինիստրութիւնը դաւաճան և դասալիք է յայտարարել ռուսաց զօրքի մէջ ծառայող 12 բուլղար զինուորականներին, որոնց թւում են Ռադկօ Դիմիտրիեւը, Սարաֆովը և Լուգկանովը։

✦ Գերմանացիք արգելել են բուլղարներին գրաւել Մօնաստիրը, կամենալով յանձնել այն Յունաստանին։

✦ «Речь»-ին հեռագրում, որ Կաւմանովոյի մօտ բուլղարների և սերբերի մէջև սկսվել է մեծ ճակատամարտ։

✦ «Рус. Инв.»-ի ասելով, գերմանացիք եռանդով պատրաստվում են ձմերային արշաւանքի, որի ժամանակ լինելու են սոսկալի կռիւներ։ Վերջերս գերմանացիք անասելի չափով ռազմամթերք է ուղարկում դէպի Ռիգայի, Ֆրիդրիխշտադտի և Եակոբշտադտի շրջանները։ Ըստ երևոյթին նրանք վճռել են պաշարել Դվինսկը։ Բայց գերմանացիների գլխաւոր նպատակը մեր զորաճակատի վրա ժամանակ վաստակելն է, մինչև հաստատման դէպքերը բալկանեան ռազմաբեմում։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ԻՐԱԿԱՆ ՔԱՆԱԿԸ

—

Մի թիւրք օֆիցեր հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդել «Թանի» Դէդէաղաջի մասնաւոր թղթակցին։

Թիւրքիան պատերազմը սկսած օրից՝ զէնքի կոչեց 1.300,000 մարդ, որ բաղկացած է ըէդիֆ կամ պահեստի զինուորներից, 35—50 տարեկան, իսկ մնացած հարիւրին 30-ը կանոնաւոր կամ նիզամիէ զինուորներից։

Մինչև այժմ, այսինքն սեպտ. 9-ը (ն. տ.), Թիւրքիան կորցրել է 500,000 մարդ վիրաւոր, գերի և սպանված. վիրաւորներից մի քանի հարիւրեակ միայն կարողացան առողջանալ և վերադարձան բանակ, այնպէս որ թիւրքական այժմեան բանակը բաղկանում է 850,000 մարդուց՝ հետեւեալ կերպով. Թրակիայում գտնվում է Ադրիանուպոլսի 2-դ կորպուսը՝ 50,000 մարդ. Զաթալջայում Անատոլիայի 6-դ կորպուսը՝ 40,000. Գալիպոլիում և Դարդանէլում 190,000 մարդ, որոնք բաղկացած են՝ Ռոդոսթոյի 3-դ, Զմիւռնիայի 4-դ և Անգորայի 5-դ կորպուսներից, ինչպէս նաև մի քանի անկախ դիվիզիաներից։ Պոլսում, առաջին բանակը, որ բաղկացած է 70,000 մարդուց։ 150,000-նոց մի բանակ էլ ունի, որ կազմված է անկախ դիվիզիաներից և Փոքր-Ասիայի զինուորներից՝ Զմիւռնիայի և սրա շրջակայ ամրոցների համար։ Սիրիայում կան 50,000 մարդ՝ բաղկացած 7-դ և 8-դ կորպուսներից, իսկ մնացածը՝ 300,000 մարդ գտնվում են Կովկասում Ռուսիայի դէմ կռւելու։

850,000-ի մէջ մտնում են 100,000 քրիստոնեայ և հրէայ զինուորներ, ինչպէս նաև ըէդիֆ կամ պահեստի զինուորները, որ, ինչպէս ծանօթ է, Թիւրքիայի ամենից տկար կողմն է, որը դժբաղդաբար երբէք չի կարող պաշտպանողական ճակատ բռնել։

Բայց մանաւանդ ռազմամթերքի պակասութիւնը խիստ նուազեցնում է թիւրքական բանակի արժէքը։

Եթէ շարունակվի Գերմանիայից ռազմամթերք ստանալու անկարելիութիւնը, այդ դէպքում թիւրքական բանակը, ռազմամթերքի չգոյութեան պատճառով, պիտի ընկնի պաշարված և սովի մատնված մի բանակի դրութեան մէջ։

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐ

—

Պ. Զարիֆեան «Médaille Miliaire» ստացած է. գերմանական խրամատ մտնողներուն առաջիններէն մին կըլլայ, և հակառակ վիրաւոր վիճակին՝ չուզեր ետ դառնալ։

Պ. Սրմաքէշեան «Croix de Guerre»-ի արժանացած է ռումբերու և գնդակներու տակ՝ պաշտօնավարութեամբ իր «agent de liaison»-ի պարտականութիւնը կատարած ըլլալուն պատճառաւ։

Սպաննուած են 1) Աճէմեան Ստեփան, 2) Մանուկեան Պաղտասար, 3) Անմեան, 4) Մելիք-Սարգսեան (պարսկահայ), իրաւաբանական ուսանող և Պարիզի հայ ուսանողական միութեան անդամներէն։

Վիրաւորուած են. 1) Լևոն Արապեան, 2) Արթին Սիմոնեան, 3) Պետրոս Սաւաեան, 4) Պասմաճեան երկու եղբայրներ, 5) Գաբրիէլ Մազմանեան, 6) Արթին Ատիլեան, 7) Նշան Գահվէճեան, 8) Տէր-Մինասեան, 9) Արթին Ֆէնճեան, 10) Աղանացի Յակոբ, 11) Գէորգ Ներսիսեան, 12) Արամ Արամեան, այս վերջինը անզգուշութեամբ ձեռնառումբ մը պայթեցուցած է և զրկած բոլոր մատները կորսնցուցած է, ինչպէս նաև ձախ աչքը, 13) Ոսկան Մխիթարեան երկրորդ անգամ ըլլալով վիրաւորուած է, 14) Պօյաճեան Արաաշէս, 15) Արշաւիր Էլիազարեան, 16) Վահան Թամրեաեան։

Անհետացած են 1) Ստեփան Մամացեան, 2) Նուպար, 3) Արշաւիր։

Սուրէն (վանեցի), պ. Ոսկան Մխիթարեանցի մօրաքրոջ որդին, պատերազմի դաշտին վրայ սպաննուած է։

Մէնկէնէճեան Դարդանէլ սպաննուած է։

Տասնապետ Էմաահարեան Դարդանէլ ղըրկուած է Ալճէրիայի Բէլաբէս քաղաքէն։ Ղազրեան և Սարգիս Պիւլպիւլեան նոյն տեղն Դարդանէլ պիտի մեկնին։

Պ. Տելեմաք Զիլէքեան, որ երկու ամիս առաջ վիրաւորուելով և ապաքինումէ յետոյ ամսուան մը արձակուրդ ստացած, իր բանակին Սալէզ գացած էր, շաբաթ մը առաջ Մարսէյլ հասնելով կրկին պատերազմի դաշտ մեկնեցաւ։ («Աթան»)

ԱՆԳԼԻԱՑԻՆԵՐԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԲԵԼԳԻԱՑԻՆԵՐԻՆ

—

Ինչպէս յայտնի է, 1914-ի օգոստոսին գերմանացիք արշաւեցին Բէլգիա և գրաւեցին նրա գլխաւոր քաղաքները։

Մօտ 300,000 բէլգիացիներ փախան դէպի Անգլիա։

Նրանց փախուստը ոչ մի կերպով չէր նըմանում հայկական փախուստին։

Նրանք ոչ կոտորվել էին գերմանացիներից և ոչ էլ կողոպտվել էին դարերով. նըրանք հայերի պէս չը քայլեցին 10—15 օր քաղցած և ծարաւ, ենթակայ քիւրդական յարձակումներին։

Անգլ. կառավարութիւնը բէլգիացիների փոխադրութեան համար ուղարկեց նաւեր, որոնք վերցնելով «սարսափահար» գաղթականներին, փոխադրեցին Ֆօլքստօն նաւահանգիստը։ Նախ բէլգիական կառավարութիւնը կնքեց մի 100 միլիոն ր. փոխառութիւն Անգլիայից՝ հոգալու Անգլիայում և Ֆրանսիայում ապաստանած գաղթականների առօրեական ծախսերը։

Անմիջապէս Լօնդօնում, Ֆօլքստօնում և անգլիական ուրիշ մեծ քաղաքներում կազմվեցին հիւրընկալական յանձնախմբեր՝ դիմաւորելու և տեղաւորելու բէլգիացի փախստականներին։

Ամենից առաջ Լօնդօնի լօրդ-քաղաքագլխի և ականաւոր գործիչների մասնակցութեամբ կազմվեց մի պաշտօնական կօմիտէտ՝ կազմակերպելու նպաստի և տեղաւորման գործը։ Լօնդօնում վարձվեցին մեծ հիւանդանոցներ, առանձին տներ, գրաւվեցին հասարակական շէնքեր բէլգիացիների տեղաւորման և բնակութեան համար։ Դարձեալ Լօնդօնի զանազան թաղամասերում և միւս մեծ քաղաքներում կազմվեցին տեղական կօմիտէտներ՝ դիւրացնելու նրանց ապրուստի գործը։

Հրաւէր կարդացվեց բրիտանական ազգին լինել վեհանձն և առատաձեռն՝ հանդէպ այդ փոքր և պայքարող ազգի և նրան տալ ապրելու հնարաւորութիւն։ Եւ ահա հազարաւոր անգլիացի ընտանիքներ դիմեցին կենտրոնական և տեղական կօմիտէտներին, յայտնելով որ իրանք պատրաստ են իրանց տներում իբրև հիւր ընդունելու մի բէլգիացի ընտանիք։

Մի անգլիացի տիկնոջ կողմից ես գնացի իրան հիւր վերցնելու որևէ բէլգիացի մի փախստական ընտանիք, և կենտրոնական կօմիտէտի կողմից ինձ տացին, որ երկու օրվայ ընթացքում արդէն տեղաւորվել էին իբրև հիւրեր մօտ 150,000 փախստական և թէ նրանք տիկնոջ կուղարկեն մի ընտանիք, երբ նորերը գան։

Այդ կերպով հարիւր հազարաւոր բէլգիացիներ անգլիական ընտանիքներում կամ հիւրանոցներում ապրեցին իբրև հիւրեր մի քանի ամսով, մինչև նրանք գտան մի գործ Անգլիայում և կամ վերադարձան իրանց երկիրը՝ ընդունելով Գերմանիայի լուծը։

Անգլիական կառավարութեան և ժողովրդի՝ բէլգիացի փախստականներին ցոյց տուած հիւրընկալութիւնը և աջակցութիւնը անկասկած ներկայ պատերազմի ընթացքում կը մնայ որպէս լուսաղէն մի գիծ։

Իսկ սըր Էդուարդ Գրէյ պարլամենտում արդարացնելով Գերմանիայի դէմ Անգլիայի պատերազմական յայտարարութիւնը՝ ասաց, որ իրանք պատերազմ են յայտարարում Գերմանիային, որովհետև վերջինս բռնաբարել էր Բէլգիայի չէզոքութիւնը։ Իսկ դրա գլխաւոր պատճառն էր,—ասաց Գրէյ,—այն հնաւոր իրողութիւնը, որ Գերմանիան իսկապէս սպառնում էր անգլիական շահերին։ Ուրեմն Անգլիայի բարոյական պարտաւորութիւնն առ Բէլգիա ունէր աւելի ձևական բնաւորութիւն. սակայն անգլիացիք հիւրընկալեցին բէլգիացիներին աւելի սիրով, քան իրանց եղբայրներին։

Արշակ Սաֆրաստեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք 1) Նոր-Նախիջևանից, Արմենակ Սիւրմէնեանից 45 ր., 2) Սաղեան գիւղից (Շամախու գ.), ուսուցչուհի Մ. Աթաբէկեանի միջոցով, Բուդաղեան դպրոցի մանկավարժական խորհրդից 32 ր., 3) Ալուպկայից, Յ. Օհանեանից 15 ռուբլի։

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

—

Յայտնի է, որ մեր հակառակորդ տեղական հայ թերթը վերջերս պատեց մի առաջնորդող յօդուած «Կանգ առէք» որոտընդոստ վերնագրով, որի մէջ հիմնվելով կուսակցական բժ. Հ. Օհանջանեանի մի հեռագրի վրա, թէ իբր Արարատյի դաշտում 500 հայ փախստականներ յարձակման են ենթարկվել քիւրդերի կողմից, այդ 500 նոր զոհերի արեան պատասխանատւութիւնը կամենում էր ձգել Վանի նոր նահանգապետ Տէրմէնի և Վանի վերաշինութեան համար կազմված յանձնաժողովի վրա։ Միևնոյն ժամանակ նա առիթ էր գտնում ծաղրել այդ «շինարարների արտաքոյ ծրագիրը»։

Մենք առաջին իսկ պահուն կասկածեցինք, որ լուրը թխված է կուսակցական թերթում՝ խափանելու համար մի բարի և օգտակար գործ։ Դիմեցինք ուր հարկն է, տեղեկութիւններ հաւաքեցինք և մեր կարծիքն արդարացաւ, որից յետոյ մենք իրաւունք համարեցինք անարգանքի սիւնին գամել ինսինուացիայի հեղինակներին և նրանց արտայայտիչ թերթը։

Զգալով այժմ իր սխալը և սթափվելով, բժ. Հ. Օհանջանեանը վերջապէս խոստովանում է յիշեալ թերթում, որ ինքը սխալ տեղեկութիւն է հաղորդել բայց իրան սխալեցնողն եղել է մի վստահելի անձն (անշուշտ Թաշֆայական)։

Սակայն լաւ է, որ Թաշֆայականներն այդքան են խոստովանում են։ Միայն ինքն թերթն անապաշաւ է մնում։ Կորրեկտութիւնը պահանջում էր, որ թերթն ինքն ևս ետ վերցնէր իր խօսքերը, ուղղված «շինարարներ» հասցէին, և խոստովանէր, որ «տխուր մրցակցութեամբ» բռնված են ոչ թէ այդ շինարարները, այլ իրանք։

Հ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐՏԿՈՑՈՒՄ

(Պատմուածք Քր. Ռուստէնի)

—

Արևածագի կարմիր մշուշը խորհրդանշանն էր այդ օրը կատարվող անցքերի։ Վաղ առաւօտեան փոքրիկ գիւղը եռում էր, բայց ոչ իր սովորական խաղաղ, աշխատաւորի կեանքի կուռով։ Հրանօթների որոտը և ձիերի խրխինջը բռնել էր շրջակայքը։ Մերթ այստեղ, մերթ այնտեղ լսվում էին հրամանները թնդանօթաձիգ գնդին՝ թողնել գիշերվայ կայանը և արշաւանքի պատրաստվել։

Թնդանօթակիր սայլակների երկար շարքերի ետևից համաչափ քայլերով, խիտ շարքերով գնում էր հետեւակը։ Սրանց ետևում, ձիաւոր գնդի աջնից, շրջապատված իր շքախմբով, օրօրվում էր վեհօրէն գնդի հրամանատարը։ Նա գեն. դիվիզիայի հրամանատարի կարևոր հաղորդագրութիւնների տպաւորութեան տակ էր. բայց ճգնում էր հանգիստ և անհոգ ընդգրկել իր ստորադրեալների հարցական հայեացքները։

Եւ ահա լսվեց մի ծանր հարուած։ Հրամանատարը ուշադրութիւնը լարեց։ Զինուորները խորհրդաւոր կերպով իրար նայեցին։ Պայթող հրանօթների որոտագին հարուածները կրկնվեցին աւելի ու աւելի յաճախ. բայց ոչ ոք առաջ չը գնաց։ Լաֆէտային նախանիւների վրա նստած զինուորներն անհոգ ծխում էին։ Այստեղ ու այնտեղ լսվում էին անհոգ ծիծաղների պոռթկումներ։ Կարծես հրետանիի այս առաջին հարուածները այդ խղճալի ջահէլներին չէին վերաբերում։ Երրորդ մարտկոցի կրտսեր օֆիցերը սակայն անտարբեր չէր դէպի լսվող լաւ հասկանալի որոտները։ Նա յուզվում էր. նրա մատղաշ, կեանքի ծարաւ մարմինը բնազդաբար ցնցվում է իւրաքանչիւր հարուածից, բայց միևնոյն ժամանակ՝ մի այլ զգացմունք գերակշռում էր և մղում այնտեղ, որտեղից գալիս էին այդ ահռելի հարուածները։

Նրա հոգեկան և մարմնական դրութեան այդ հակադրութիւնը մատնվում էր այն ջղային ցնցումներով, որով բռնվել էր նա այն րոպէից, երբ որոտաց առաջին հարուածը։ Նա ուզում էր անպայման խօսել մէկի հետ, պարզել իրեն ներկայ երկւութիւնը, բայց ամաչելով թուլութիւնից՝ նա իսկոյն զսպեց իրան։

Երիտասարդ օֆիցերը նորեկ էր թէ պատերազմում և թէ մարտկոցում, ուր ընկել էր հէնց ուղղակի զինուորական դպրոցից։ Նա շատ ջահել էր և մինչ այդ րոպէն խիստ հպարտ։

Յանկարծ ամբողջ զորաշարքը անսպասելի կերպով կանգնեց։

— Իսկոյն դիրքեր գրաւել,—մտածեց երիտասարդ օֆիցերը և անհամբերութեամբ սրտատրոփ սպասում էր հրամանի առաջին խօսքին։

Լսվեց ետ դառնալու հրամանը, և նորից ամբողջ փաշալը մնաց իր տեղը։

— Այս ինչ է նշանակում արդեօք,— հարցրեց ինքն իրան երիտասարդ օֆիցերը, լարելով իր տեսողութիւնը դէպի հեռուն, սպասելով թէ ինչ էր կատարվում փոշու խիտ ամպերի մէջ կորած ճամբի վրա։

Հետևակ շարքերը համաչափ քայլերով ետ անցան իրար ետևից։

— Մեթէ պէտք է սորվեն ամբողջ զօրամասը կորցնել,—մտածեց օֆիցերը անհասկանալի կերպով։

Անցաւ հետեւակը, և թնդանօթաձիգները առանց առաջապահի առաջ անցան։ Սարսափելի անհամբերութիւնը տիրել էր ամենքին և կառքի դուրս թռած զինուորներին թւում էր, թէ կրիայի քայլերով են առաջ գնում։ Ոչ պակաս անհամբեր էր նաև 3-րդ մարտկոցի կրտսեր օֆիցերը. և որպէսզի նա ժամանակը գոնէ մի քիչ կարճացնէ և առանձնանայ շրջապատից, սկսեց վերլուծել իր հոգեկան դրութիւնը։ Վստա՞հ է նա արդեօք իր վրա. իր հոգեկան «եսը» պիտի կարողանա՞յ յաղթել իր մարմնական թուլութեան։

— Եւ ինչ, եթէ վերջինը գերակշռի և ինքնապաշտպանութեան անասնային զգացմունքը մթագնէ իր մինա՞զը,—մտածեց երիտասարդ օֆիցերը, և որպէսզի չենթարկվի այդ վտանգաւոր ինքնաներշնչմանը, նա հաւաքեց իր կամքի ամբողջ ուժը՝ ետ ստանալու նախկին սառնարիւնութիւնը։

Տարված այդ ներքին մաքառումով, նա չէր նկատում շրջապատը և նոյնիսկ չէր լսում աւելի ու աւելի ուժգնացած հըրաձգութիւնը։

Վերջապէս թանձր մշուշը ցրվեց. աչքերը սևեռեց հեռւում բլրակի վրա, որտեղից բացվում էր իր առաջ փռվող դաշտերի լայնածաւալ տեսարանը. այնտեղ, բլրակի վրա յայտնվեցին մարդիկ։

Փոքրիկ, սպիտակ խրճիթները գեղարուեստօրէն նայում էին շրջապատի այգիների կանաչների միջից, և թւում էր թէ նրանք հեռու են բռնկվող արիւնոտ դէպքերից։ Գիւղի վրա իշխում էր տարօրինակ լռութիւն, և եթէ հարեան բլրի վրա մրջնի պէս սփռված հետեւակը չերևար, նրանց առջև ընկած տարածութիւնը մեռած պիտի թւար։ Իսկ մինչ այդ, օդը ցնցվում է հրետանիի հարուածների միախառն որոտներից, ընդհատվելով երբեմն աւելի ուժեղ պայթիւններից։

Երիտասարդ օֆիցերը տխուր դիտում էր ինչ էր, որ այդ որոտացող թնդանօթները ծնունդ էին առնում անամպ երկինքից։ Եւ յանկարծ բլրի վրա փայլեց մի ինչ-որ բան, որի շուրջը հաւաքվեց հետեւակը, և ծխի ամպը կրկին բարձրացաւ։

— Այնտեղ է, այնտեղ,—աշխոյժ մտածեց օֆիցերը, յամառօրէն շարունակելով աչքերով հետևել դէպ անտեսանելի թշնամուն։

Իսկ մինչ այդ, հետեւակների մութ սուսերները արդէն բլրի գագաթին ու շարքերը մէկը միւսի ետևից անցան գագաթի միւս կողմը և անհետացան աչքից։

— Ահա, ահա կը հնչի հրամանը և նրանք կը թռչեն առաջ,—մտածեց օֆիցերը։

Բայց յարձակվելու փոխարէն, նրանք նորից ետ քաշվեցին, թոյլ տալու սուինամարտի ելած հետեւակ եղբայրներին։ Ինչպէս տարբեր էր իւրաքանչիւրի հոգեկան աշխարհը, որը հայելու նման արտացոլում է նրանց դէմքերի վրա։ Նրանք գնում էին կատակելով մի կողմում կանգնած թնդանօթաձիգների հետ, ուրախ ու անհոգ ծիծաղում էին, մի քանիսը տխուր խորասուզված էին՝ խորը գիտակցելով րոպէի կարևորութիւնը։ Երիտասարդ մի զինւոր, անորոշ նայուածքով, յօգնած, սայթաքեց, շրթունքները ինչ-որ բան մրմնջացին. նա աղօթեց։

Այդ մարդիկն էլ միւսների նման անհետացան ճակատագրական գծից՝ բլրի գագաթից, իսկ վաշտը՝ մոռացվածի նման երկար ժամանակ չէր շարժվում տեղից։

— Երրորդ զօրախմբակը պատրաստ,— լսվեց հրամանը։

Թնդանօթաձգային սպասաւորները վեր ցատկեցին տեղերից, և աշխատանքը եռալ սկսեց։ Ծածկոցները հանվեցին և թնդանօթները ենթարկվեցին ամենամանրակրկիտ քննութեան։ Վերջապէս ամեն բան պատրաստ էր, և երիտասարդի սիրտը բաբախեց աշակերտական տենդով. րոպէներն անցնում էին ձանձրացուցիչ սպասողական դրութեան մէջ, և զօրախմբակը պատրաստ էր յարձակման հէնց առաջին իսկ հրամանին։

— Առաջ...

Զօրախմբակը պոկվեց տեղից, անցնելով մի փոքր տարածութիւն փոշոտ ճանապարհով, յանկարծ դարձաւ դէպի կողք և երկար հաւասար շարքերով ձգվեց կանաչ մարգագետնի վրա։

— Նախանիւները հեռու։

Եւ ձիերը, արձակված նախանիւների հետ կիսաշրջան կազմելով ետեւում կանգնեցին։

Զինուորները թնդանօթների շուրջը խմբվեցին, ուղղեցին, վերցրին ռազմական կահաւորանքը և յետոյ, ըստ հրամանի, գրաւեցին իրանց տեղերը։ Հեռւում, բլրի գագաթին խռնվել էին մարդիկ. հեռախօս էին անց կացնում։

Երիտասարդ օֆիցերը շուռ եկաւ, աչքերով փնտռելով մարտկոցի հրամանատարին։ Վերջինս նկատեց, ժպտաց և գլխով խրախուսական շարժում արաւ։

— Ապա, ինչպէս էք զգում ձեզ, դողում էք,—ակնարկեց նա հեռուից իր կրտսեր օֆիցերին և իսկոյն գրաւեց իր տեղը ռազմական պահեստի վագոնների ետևը, որոնց վրա նա հսկում էր։

Այդ բոլորը աւելի շուտ նման էր զօրահանդէսի, բայց ոչ պատերազմի։ Երիտասարդն անհամբեր սպասում է ռազմական գործողութիւնների սկզբին։

Հեռախօսի զանգակը հնչեց, նրան հետևեց թնդանօթներն ուղղելու հրամանը, խմբվեցին զինուորները և պատրաստելով պէտք եղած բարձրութեան աստիճանը՝ գոչեցին.

— Պատրաստ է։

— Կրակ։

Թնդանօթի երախից դուրս թռաւ բոց, և ծանր ռումբը որոտագին շառաչելով դիմեց դէպի թշնամու կայանը։

Մի հարուած ևս որոտաց, և մարտկոցը լռեց՝ սպասելով իր հարուածների հետևանքին։ Սակայն շուտով հրանօթները նորից որոտացին և ստանալով հարուածի համար աւելի ճիշդ ցուցում՝ սկսեցին անընդհատ կրակ տեղալ թշնամու վրա։ Հրետանիի որոտի մէջ չէր կարելի հեքը։ Շառաչող ռումբերը թռչում, անցնում էին բլրի գագաթով և պայթում հեռու՝ նրա ետևում։ Պարտականութեան գլուխ կանգնած երիտասարդը մոռացաւ ամեն ինչ աշխարհում. բայց հետաքրքրական մտքերը, թէ ինչ է կատարվում թշնամու շարքերում, հանգիստ չէին տալիս իրան։

Հաղիւ էր լսվել հրամանը, որ մարտկոցը նորից առաջին դիրքը բռնեց, և միայն խիտ

ՆԱԽՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԱՐԵՆԱՒՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի նախագահութեամբ, նոյեմբերի 9-ին, տեղի ունեցաւ նախնական խորհրդակցութիւն պարենաւորման գործի վերաբերեալ, որին մասնակցում էին քաղաքային հասարակական գործիչներ և պաշտօնականութեան ներկայացուցիչները։ Քննութեան էին դրված չորս հիմնական հարց—տրանսպորտի զարգացումը, աւելացնել քաղաքների ինքնավարութիւնների ֆինանսները ազգաբնակութեան մթերքներ մատակարարելու համար, հասարակական հիմնարկութիւնների նախաձեռնութիւնը տրանսպորտի կանոնաւորութեան վրա և քաղ. ինքնավարութիւնների անմիջական մասնակցութիւնը ազգաբնակութեանը մթերքներ մատակարարելու գործում։ Գլխաւորապէս այս հարցերի շուրջը տեղի ունեցան վիճաբանութիւններ։ Վերջ ի վերջոյ նախնական խորհրդակցութիւնը ցանկալի համարեց պարենաւորման գործի խորհրդակցութիւնը բաժանել հետեւեալ 3 սեկցիայի. 1) Կոմմերցիական հարցեր—տեղական և կըրջանային մարմիններ, որոնց կապը կենտրոնական մարմնի հետ. Թանկութեան դէմ կռուելու համար մարմիններին օժտել ֆինանսներով։ 2) Տրանսպորտային գործը—աւելացնել ճանապարհների հաղորդակցութեան պլանները կրելու գործը. տրանսպորտային գործը վարելու կարգ. ծովային տրանսպորտներ։ 3) Ազգաբնակութեան կարիքները և ունեցած պաշարը (անհրաժեշտ կենսամթերքներ և արդիւնաբերութեան կարիքները). անհրաժեշտ մթերքների, արտադրութեան աւելացման հարցեր. համակայսերական միջոցներ—դրամական, համակայսերական գներ։ 4) Բնակարանային հարց։

Երեկոյեան խորհրդակցութեան մէջ, որ տեղի ունեցաւ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկի նախագահութեամբ, խօսվեց այն մասին, թէ ինչպէս արտայայտվել առանձին խորհրդակցութեան մէջ—քաղաքականութեա՞ն ընդհանուր բնոյթ կրող յայտարարութիւններով, թէ յարուցել նոր առանձին հարցեր։ Երկու կողմից եղած պատճառաբանութիւններն էլ հիմնաւոր էին։ Թանկութեան պատճառները ամեն տեղ միատեսակ են և դրանց վերացնելու համար էլ հարկաւոր են միատեսակ միջոցներ, և բաւական է որ խօսեն 3—4 մարդ։ Այս կարծիքի էին մի քանի հոգևորներ, իսկ միւսները այլ կարծիք ունէին։ Նրանք ասում էին, որ մի Խատիսեան կարող է լաւ ծանօթ լինել Թիֆլիսի կարիքներին, իսկ Նովօրոսսիյսկին ոչ, հետեւաբար պէտք է հնարաւորութիւն տալ բոլորին արտայայտվելու, քանի որ դրա համար էլ գումարվում է խորհրդակցութիւնը։ Վերջին հարցի մասին մի կրակոտ ճառ արտասանեց Բագուի քաղ. դումայի ներկայացուցիչ Բր. Վիրմիշեան։ «Անհրաժեշտ է օգտվել ներկայ մոմենտից աւելի լայն չափով,—ասաց նա.— թոյլ չը տալ հասարակական սրտերին այժմ արտայայտվելու, կը լինէր աններելի և անուղղելի պատմական սխալ։ Այստեղ հաւաքվածները չեն ներկայանում կուսակցութիւնների ներկայացուցիչներ կամ կուսակցութիւններ, որոնք առիթից օգտվելով հանդէս են գալիս դեկլարացիաներով։ Մենք տեսնող տարբեր մօտէ տեր մարդիկ ենք և չենք կարող երազել այդօրինակ հանդէս գալու մասին, որ հնարաւոր է, ինչպէս օրինակ Պետական Դումայում»։

Երկարատև վիճաբանութիւններից յետոյ որոշվեց յանձնարարել Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանին շնորհակալութիւն յայտնել Փոխարքային խորհրդակցութեան հրաւիրելու համար, Բագուի դումայի ձայնաւոր Բր. Վիրմիշեանին՝ խորհրդակցութեան նշանակութեան և հասարակական տարրերի նրան մասնակցելու մասին, Վլադիկավկազի քաղաքագլուխ Բայեվին՝ կենսամթերքի պաշար պատրաստելու մասին, Թիֆլիսի քաղ. դումայի ձայնաւոր Միք. Ջաքարին—երկաթուղիների տրանսպորտի մասին և Բագուի դումայի ձայնաւոր Սկրէպնիկիւին՝ ծովային և գետերի ճանապարհները օգտագործելու մասին։

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Պրինց Աբդուլ-Ըըզակ Եզդաշիրին

Սարատով, 31 հոկտեմբերի

Ա՛շիրէ*) բը հօրմաթ
Ա՛բդուլ Ռըզակ Եզդաշիր բէյ,

Ա՛զ խոնդը մա համու, չը ամ նվիսանդինա լը կագեթէ «Մշակ» դա. հեբկա համու աասամ, կը ամ նվիսանդի եմ, ամ մարիկի դորդըմանդի, աշիրէ ժը աշիրան. ավ Ֆըլլա, կը քամթիրան բախտ է ամ, ժը դոժմը նա ամ ազա կըըրըս, նան ու խաբակ դաբըս, ու բը սավարէ խա ռէ ավիտրըս հատտա սիսորէ վալաթէ մա. ավ զմանջի, կը ամ կըրիմ բըռ էմըն ռա, հատտա ռոժէ մըրնէ ժը բիր է մըն է դաթ նաչա։ Սամըս ավ զմանջի բըրմ խող ամրէ ամ, ամր է ժըն ու չառ է ամ դըբէժ բըկա. բըրա մալ ու օջախ է ամ դադիմ բըն։

Աշիրէ բը հօրմաթ. ամ դըբէնի, կը զմանէ կօրմանջի ժը բիր էմըն նաչուկա, հարչանդ պէնջի սալ դըբըռ, կը ավ ժը վախթանէ խա չըւմա վալաթէ Ռըմըա. Նահա ավ լը շնարէ Սարաթովէդա Փաթիշահէ մա ռա դալըխ դըկըմ։ Ա՛զ ժը վալաթէ Ռամվանէ մա. մալէ մն լը գոնդէ Դամվըլէ դա եմ. նավէ մըն Սոլըման բաց ա, բավ, էմըն Միրզա Ա՛թօ բու, կալը կէ մըն Մալիք Եզօ։ Օջախ է մամէ մինա օջախ է ամ ժը աշիրան ա. ժը վախտէ կալըկա, բավէ բավկըրա ամ բը կօրմանջա ռա դոստաի, քըրիվատի ու պզմամի դըկըն. դմբէ մալէ մա լը բար կօրմանջա վակրիա։ Կը վալաթէ մա դա կօրմանջ աջամ, Ֆըլլա բը հավա մինա բըռ է հալըք ռէ դըչըն. լը ռոժէ ռանդի է ռէն հավարէ հավդու Նավ կօրմանջա, աջամ ու Ֆըլլա դա դոժմընաի դաթ թունա։ Ավ ժը բավ ու բավկըրա բը հիսաբըմ, կը բարէ լը վալաթէ վա ժի, դա ավանա համու բը հավա փաք ռէ դըչըն։ Սի սալ դը բա, կը բը շայթանի է, դոժմընա օրթէ Ֆըլլա ու կօրմանջա խաբար բու. եմ։ Ա՛վանա ժի մինա բէ աղըլա քամթըրմա հավդու, մալէ հավդու խարաբ դըկըն, ու հավդու դըռ դըկըն։ Ավ չ չի եմ. Ջոնիք բուամ, հա՞րբունամ կը գոշաէ հավ դը խօն։ Սամբաէ վի չի ամ, ավ նոզանըմ. ավ մամա մաթմա։

Ա՛շիրէ բը հօրմաթ. չը դաս ալը էմըն դըբռա, է փըռ փաք բա, հագար էլըայի է կօրմանջա ու վաքըտէ Ֆըլլա բարավըրն, բը հավդա մինէ բըռ խաբար բըդըն, ու բըդանըն, սարարէ դժմըն ափէ բէ։

Բէ քախտի ու բէյաղլուինէ մա հարդու չէ ամ Բը էլ բայի է կօրմանջա մասլահաթ բըկա ու բըպըրսա, հարկա հան ռավինա բարավըրնը, ժը մըն ռա բըռնքիմ. ավէ մարդա բըդըմ սարդար է փաթիշահ է մա, վաքի դաստուր բըդա ամ բարավըրն։ Ա՛զէ վը համու մէհվան դաբի կըմ մալ էմըն։ Տօ մաթալ ա է կօրմանջի պըռաջ բը ջանի. սալէ վըրա սալթան բա, մանէ վըրա մէհվան բա։ Համու համու է բըն մէհվան է մըն է ամալիզ. դարի է մալ է մըն լը թարվըդա է վարա. վըրըն սար սար էմըն, սար հավ է մըն. լը բար օջախ է մըն հան է հօրմաթ է սալթանա բըբինըն։

Կը վալաթէ մադա հան նէ բը ծավ է խարաբինըն, չավա ռահամթ է փաթիշահ էմա համու մըլլաթա,—ռուսա, փրանգ, ռումը, կօրմանջ, Ֆըլլա, աջամ, դորջի, թարքի,—բը հավա մինա չինար է փաք ու դոստ ռէ դըչըն. ժը դոժմընաի դաթքա խըր նա դըբի հա ու նամբիսա։ Ժը դավը էրբէ ռէ հավար սալ դըբըռ, կը կօրմանջ ու Ֆըլլա լը ռաժա ավ ռանջբէրնա ու չինարըն, ու խըտամէ սալթան բըբ արառէ դըբըն։

Աշիրէ բը հօրմաթ. ավ կալըկէ 66 սալաբը, օմրէ մըն բըռ աղլա հաթթի եմ. մըն բըռ ամ, ավէ ժը ամ ռա առա դըչի մալըկա ամ ժի մինա մըն է փաք ֆամ բըկէ. Նավ հար կալը մըրըփէ զմանջ, բը խաֆ ու բը խման. լը հանա մարըփէ բէքալտա, բէ ռահմ ու բէխադէ։ Մըն բը հիսաբ եմ, կը փըռ կօրմանջ հաթիբըռն քամակէ Ֆըլլա։

Հայէֆ կը նավ կօրմանջա դը մարըփ է բէքախտ. ավանա դոդաբ դըկըն դըժմն էմա, դըքամինա սար Ֆըլլա ու դըռ դըկըն։ Ռոժակէ ու էբըրինէ մարըֆէ բէքամամ, խանէ զար դըլրըն ու շիվան է էլակի, կը դաժմըն բէ ռահմ դըռ դըկա, է բըդինաժըն դաւ է խաղէ։ Տօ է բըբինէ, ետ բըբըհէյէ, չավա խաղէ հայէֆ է էլակի բէքամամ բըռայինամ ժը թախսիրքարա։ Նա է բըբինէ դիվանէ խաղէ։

Ա՛զ ժը վը դըբըռմ, լէ ավաթէ կօրմանջա ու խայամթէ վը փաք դըզանըմ։ Ավաթէ վը, քլամէ վը, համու բարավկիրա նավ մըն, կը լը վալաթ է վա «մըրխաս» ավէ համը դըվանռիա նավալա ու բըրինն ու բըլաա. ավի դըխօռ մարի ժը ալէ փէյա։ Ռոժակէ դա չինար, եկէ Ֆըլլա, եկէ ժի կօրմանջ հաթթըրա գալիքէ է Սիսամփանէ կը արդու բարավկըն։ Ավանա դըղանըրրան, կը մըրխաս լը վաղարանա դը գառա էվարէ հաթըրան շկաֆթակէ, կը խաշաթըրն առ արդա դըքարակէ լընգ է խա կըրըրան. կը շալէ էդըն Ֆըլլա։ Շավէ մարըֆ սառնդը բու ու հաթը բու շկաֆթէ, կը վանա բըլխառ։ Ջը դաս լընգ էվանա, նամըրմը է խա կըրըրան լը դա ալէ թեան, ու լը սարժի ալէթըրան չըլլ լդա էխա։ Մըրխաս մաքու մաթմալու դոսթըրան. ժըմն դարըխ նավալ է Սիսամփանէ հագար սէռ սէ գալը, լէ նա գըրրքուն սարը։ Բը վի թարդի կօրմանջ ու Ֆըլլա սախմարանը։

Հատտա Ֆըլլա ու կօրմանջ բըհավա մինէ բըռ ռէ դըչըն, ավանա «մարըփ է դոստէ բըն». դոժմընէ մարըխաս նոկարըռան զարար բըդըն։ Սէ հավար սալ բըռաբի է կօրմանջա ու Ֆըլլա դադիմ բուն։ Ժը վէ ռոժէ, կը մըլլաթէ Ֆըլլա դոժմըն դըռ կըր ու քըշէ Ֆըլլա բըրի, նօրմաթ հաթթի հա մըլլաթէ կօրմանջա։ Աշիրէ բը հօրմաթ. ռոժակի կօրմանջ է բըբինըն, կը ավ ռասա դըբէժըմ։ Տօ է ավ չաւ բըբինի, կը ավ դոստ ու բրաէ կօրմանջա մա. ռոժէ տանդի էդա հաւէ մըն նազդըկըն։

Պրոֆեսորէ հօրմաթի լը մաթթարխանէ փաթիշահ հավըրմթէ «Վլադիմիրդա։

Սօլըման-Երանալ Եղիազարով

(Թարգմանութիւնը)

Սարատով, 31 հոկտ.

Պատուական ազնուական
Աբդուլ Ռըզակ Եզդաշիր-բէյ,

Ես կարդացել եմ ամենը, ինչ դու գրել ես «Մշակ» լրագրում. եթէ ճշմարիտ է այն ամենը, որ դու գրել ես, դու դարդիմանդ մարդ ես և ազնիւներից ազնիւը։ Այն հայերին, որոնց քո բարքն էին ընկել (քոչուներից տրդատան խնդրել), դու թշնամիներից ազատել էիր, նրանց հաց ու կերակուր տուել ու քո ձիաւորներով մինչև մեր երկրի սահմանը ճանապարհ էիր քցել. այն լաւութիւնը, որ դու արել ես իմ եղբայրներին, մոռցա չի ընկնի մինչև մեռնելուս օրը։ Այդ լաւութեան համար, թող Աստուած երկարացնի քո, կնոջդ և երեխաներիդ կեանքը. Թող քո օջախը հաստատ մնայ։

Պատուական ազնուական. Նամակիցս տեսնում ես, որ ես քրդերէն լեզուն չեմ մոռացել, թէև 30 տարի կը լինի, որ ես հայրենիքիցս գնացել եմ ռուսաց երկիրը. հիմա ես Սարատով քաղաքում ծառայում եմ. մեր տունը Դուալու գիւղումն է. իմ անունը Սօլաման բէգ է. հայրս Միրզա Աթօն էր և պապս Մելիք Եզօն։ Մեր օջախն էլ քո օջախի պէս աշիրների*) օջախ է։ Պապերիս, հօրս և տատերիս ժամանակից մենք քրդերի հետ ծանօթութիւն, քրիվայութիւն (քաւոր ու սանահէրութիւն) և բարեկամութիւն ենք անում. մեր տան դուռը նրանց առաջ միշտ բաց է։ Մեր երկրում քուրդ, թուրք ու հայ միմեանց հետ հարազատ եղբօր պէս հօտա են գնում (ապրում են). նոր օրվանը իրար օգնութեան են հասնում։ Քրդերի, հայերի ու թուրքերի մէջ թշնամութիւն բոլորովին չը կայ։ Պապերս և տատերս լսել եմ, որ ձեր երկրումն էլ առաջ մարդիկ մէկ-մէկի հետ լաւ էին ապրում։ Երեսուն տարի կը լինի, որ թշնամին ընկել է հայերի ու քրդերի մէջ և նրանց արիւնը խառնել։ Նրանք էլ անխելքի նման իրար են ընկել, իրար տուն քանդում և իրար կոտորում։ Էս ինչ է. դիւանաբարե՞լ են, կատաղե՞լ են, որ իրար միս են ուտում։ Սրա պատճառն ինչ է՝ ես չը գիտեմ ու մնացել զարմացած։

Պատուական ազնուական, որքան իմ խելքը կտրում է, շատ լաւ կը լինի, եթէ քրդերի ցեղապետներն ու հայերի ներկայացուցիչները ժողովվեն միասին, իրար հետ եղբօր պէս խօսեն և իմանան, թէ ինչն է մեր թշնամութեան, անբաղդութեան և անխելքութեան պատճառը։ Քրդերի ցեղապետների հետ խորհուրդ արա և հարցրու. եթէ դուք համաձայն էք հաւաքվել, ինձ գրիր, ես մեր Փոխարքային խնդիրք կը տամ, որ մեզ թոյլ տայ՝ հաւաքվենք։ Ես բոլորիդ էլ իմ տունը հիւր կը կանչեմ. դու քիւրդերէն առածը պէտք է իմանաս. «Տարին արի՝ սուլթան կը լինես, ամիսն արի՝ հիւր կը լինես»։ Դուք բոլորդ կը լինէք իմ ազիզ հիւրերը. իմ տան դուռը ձեր առաջ բաց է. եկէք, իմ գլխի վրա, իմ աչքի վրա։ Իմ օջախի առաջ դուք սուլթանի պատիւ կը ստանաք։

Մեր երկրում դուք ձեր աչքով կը տեսնէք, որ ինչպէս մեր Թագաւորի բոլոր ազգերին պատկանող հպատակներ—ռուս, ֆրանգ, յոյն, քիւրդ, հայ, թուրք, վրացի, տաթի և այլն—իրար հետ լաւ հարևանի և բարեկամի պէս են ապրում։ Թշնամութիւնից ոչ ոք խեր չէ տեսել և չի տեսնի։ Հին ժամանակներից հաշուած 3000 տարի կը լինի, որ քիւրդ ու հայ մի երկրում են նստած և հարևան են. նրանք մինչև հիմա բարեկամ էին և լաւ էին ապրում. պատճառն ինչ է, որ հիմա իրար են ընկել։

Պատուական ազնիւ, ես 66 տարեկան մի ծերունի եմ. իմ գլուխը շատ բան է եկել և շատ բան եմ տեսել. ես քեզ մի բան կասեմ. եթէ դու էլ ինձ նման ծեր ես, իմ միտքը լաւ կը հասկանաս։ Ամեն ազգի մէջ կան շատ լաւ, խղճմտանքով ու հոգով մարդիկ. բայց կան տուրն, անօրէն ու անաստուած մարդիկ։ Ես լսել եմ, որ շատ քիւրդեր հասել էին հայերի օգնութեանը։ Շատ ցաւալի է, որ քիւրդերի մէջ էլ կան անհաւատարիմ մարդիկ. նրանք լսում են թշնամուն, հայերի վրա են թափվում և նրանց կոտորում։

Մի օր կը տեսնես, որ անմեղ մարդկանց արտասուքը, անյանցանք երեխաների արիւնը և մի ամբողջ ազգի զուլմը ու սուգը, որին անօրէն թշնամին կոտորում է, կը հասնեն Աստուծոյ ականջին։ Դու կը տեսնես կամ կը լսես, թէ ինչպէս Աստուած ինքը անմեղների վրեժը մեղաւորներից կառնի։ Դու կը տեսնես Աստուծոյ դատաստանը։

Ես ձեզանից հեռու եմ, բայց քիւրդերի ադաթները (սովորութիւնները), նրանց բնաւորութիւնը լաւ գիտեմ։ Քիւրդերի և եզդիների մասին ես մի մեծ գիրք եմ գրել։ Ձեր ադաթները, ձեր առածները և ձեր երգերը ժողովել եմ այդ գրքում։

Պատմում են, որ հին ժամանակներում ձեր երկրում մի «մարդակեր» է եկել. նա ամեն գիշեր ման էր գալիս ձորերն ու սարերը, որ մարդ գտնի ու ուտի։ Նա մարդկանց ուտում էր տների կողմից։ Մի օր երկու հարևաններ—մէկը հայ, իսկ միւսը քիւրդ—գնացել էին Սիսըփանի անտառները ցախ (վառելու փայտ) հաւաքելու. Նրանք գիտէին, որ մարդակերն այդ տեղերը ման է գալիս. երեկոյեան նրանք մտել էին մի այրի մէջ, որ այդտեղ թաք կենան։ Նրանք մի թեռ (երկու աչքանի ջուալ) փռել էին գետնի վրա. մի աչքի մէջ թրել էր իր սանրը քիւրդը, միւսի մէջ հայը, և իրանց ոտների վրա էլ գցել էին եղների չուլը (попона)։ Գիշերը մարդակերը մարդու հոտը առել էր և եկել, որ նրանց ուտի։ Որքան ման էր եկել, նրանց ոտները չէր տեսել. նրանք թրել էին իրանց ոտները թեռի աչքերն ու վրայից չուլով ծածկել։ Մարդակերը զարմացած առել էր. «Ես ման եկած եմ Սիսըփանի ձորերի 1333 անտառները, բայց երկու գլխանի մարդ չեմ տե-

*) Այն «ա» տառը, որի վրա շեշտ (՛) կայ, հարկաւոր է կարդալ ինչպէս գերմաներէն ae—ä, օրինակ աշիր=äschir, «ա՛զիզ»=äziz, մա=mä, տա=tä, ազ=äz։

*) «Աշիր» (äschir) բառը նշանակում է «ցեղապետ», «ազնուական», «մեր ցեղից». Ինչպէս յոյները իրանց «էլլին» էին ասում և օտարներին՝ «բարբարոս», նոյնպէս՝ ուրիշից զանազանվելու համար՝ իրանց «աշիր» են ասում քրդերը։

ամալը, որը ծաւալվեց ամբողջ տարածութեան վրա, յիշեցրեց նրան անցուդարձը։

— Ինչպէս է երբեր դրութիւնը,—հարցրեց նա կողքից անցնող կապիտանին։

— Թւում է, թէ վատ չէ. մեր մարտկոցը շատ աշող գործեց, թշնամին դուրս է շպրտված բոլոր դիրքերից։

— Դուրս է շպրտվա՞ծ,—զարմացաւ երիտասարդը,—աշխատելով երևակայել թշնամու դիրքերը՝ Աստուած գիտէ թէ որտեղից թափված ռումբերով։

Վաշտը հանգիստ առաւ. թնդանօթները լուռ շնկեր շարքերի նման մնացին՝ դուռնէրը ցցած դէպի վեր։ Հարևան զօրաբանակի լէյտենանտը մօտեցաւ կրտսեր օֆիցերին և ինչքեց ծխախոտ։ Ժպիտը զսպելով, վերջինս շտապեց կատարել խնդիրը. Լէյտենանտը ոչ մի ժամանակ ծխախոտ չէր ունեցել։

Այդ միջոցին դիմացը գտնված բլրի վրա խռովեցին մարդիկ՝ հետաքրքրութեամբ ինչ-որ ուշադրութեամբ դիտելով։

— Հետևակը յարձակվի. վեցերորդ կորպուսը շրջապատված է աջ թևից...,—գոչեց կապիտանը, և մարտկոցը նորից կրակ բացեց, գրեթէ նոյն ուղղութեամբ։

— Ամուր կաց, կռիւը տաքանում է,—գոռաց կապիտանը երիտասարդ օֆիցերին։

Կապիտանի այլայլված ձայնը և յափշտակված դէմքը վատ ներգործեց նորեկի վրա։ Սա արագ դիմեց դէպի իր հրանօթները, որպէսզի խեղդէ իր մէջ ծնւող առաջին շփոթմունքը։ Մարտկոցները մէկը միւսի ետևից կուլ էին տալիս և նրանց հրանօթների որոտը միախառնվում էր միւս մարտկոցների ռումբերի և հարուածների հետ։ Հետևակը, մարտկոցի կրակի տակ, դիմեց առաջնամարտի։ Ամենքը հրանօթների ծխի միջով՝ սրտի բաբախով հետևում էին նրանց։ Հետևակները սլացան դէպի բարձր բարձր, գաղաթին մօտենալիս աւելի ու աւելի շտապեցին քայլերը։ Վերջապէս, կարծես խրտնած, նրանք փախուստի դիմեցին՝ սուինները քարշ գցած։ Մի րոպէ նրանց մութ ստուերները նկատվեցին անտառ երկնքում և իսկոյն չքացան միւս կողմը։ Առաջին շարքին հետեւեց երկրորդը, միայն թէ սա երևաց կապոյտ երկնքի լուսաւոր ֆոնի վրա, երբ իսկոյն ծխի սպիտակ ամպը ծածկեց այն և լսվեց ուժեղ մի հարուած։ Մի քանի սև ստուերներ ընկան, բայց այդ չը կանգնեցրեց յարձակվողներին, և նրանք առաջվայ նման անհետացան բլրի միւս կողմը։ Վիրաւորները գերմարդկային ճիգեր անելով աշխատում էին մի կողմի վրա սողալ, որպէսզի յարձակվողներին ճանապարհ տան, և մի կերպ փաթաթելով իրանց վէրքերը՝ սահեցին ցած։ Նրանցից մէկը, ծանր վիրաւորված գլխից, օրօրվելով անցաւ երիտասարդ օֆիցերի մօտով։

— Դժոխք, դժոխք,—մրթմրթաց նա։

Նորեկի սիրտը ճնշվեց թախծալից նայելով այդ հոգեկան և մարմնական տանջանքի վրա, բայց հրամանատարի նոր հրամանը և մարտկոցի աշխուժ լսվող որոտը արագ խեղդեցին այդ ծանր տպաւորութիւնը։ Մարտկոցը սլացաւ բլրի վրա՝ ծանր անիւների դղրդոցով և նախանիւների շղթաների շառաչով, առանց մի րոպէ կանգնելու կտրեց-անցաւ բլրի գագաթը։ Ռումբերի կարկուտի տակ մարտկոցը տեղաւորվեց նոր դիրքերում, և օֆիցերները քաշվեցին ամուր դիրքերին. Այդ միջոցին թշնամին շատ մօտ էր կրակում և նրա ռումբերն ընկնում էին շատ մօտիկ։

Թշնամու հեռաձայն թռւլացող հրաձգութիւնը վերջապէս բոլորովին դադարեց, և թշնամու կողմում բարձրացած փոշու մեծ ամպը վկայում է, որ նա նահանջում է։ Հրամայվեց դադարեցնել կրակը։

Այդ կարճատև հանգիստն աւելի քան անհրաժեշտ էր, և օֆիցերն ետ դարձաւ նայելու թէ ինչ կատարվեց մարտկոցում։ Անհապէն տարածութիւնը ծածկված էր դիակներով և վիրաւորներով։

— Տեղներդ. հետևակը յարձակվի,—լսվեց հրամանատարի ձայնը։

Բոլորն շտապեցին իրանց տեղերը։ Ներքեւում, հետևակի մութ ու խիտ զանգուածը սողոսկում էր բլրով վեր։ Մարտկոցը նորից խօսեց քաղցրահնչիւն։ Երիտասարդ օֆիցերն ուշադրութեամբ հետեւում էր թշնամու վրա տեղացող ռումբերին և զգում էր իրան իբր անխոցելի արարած, որոտ ու հրանօթային ծառայողները կառավարները ևս անում, միենոյն ժամանակ ձեռները ծալած չէին։

Ցանկարծ լսվեց խլացնող պայթիւն, հենց անխոցելի օֆիցերի մօտ, և օդի զօրեղ ցնցումը թռցրեց նրա գլխարկը։ Թշնամին շատ մօտիկ էր կրակում, և զինուորները մէկ մէկ ընկնում էին շարքերից։ Մարտկոցին հրամայվեց կրակել թշնամու հետևակի վրա և պահել դիրքերը մինչև վերջին հնարաւորութիւնը։

Երիտասարդ օֆիցերի աչքը հազիւ էր ըմբռնում շրջապատի անցուդարձը։ Նա ժամանակի հաշիւը կորցրել էր և տեսնում էր միայն, թէ ինչպէս անյապաղ գործադրվում էր իր հրամանը։

Ցանկարծ, կարծես տեսիլքում, նա լսեց իրան վերաբերող այս խօսքերը։

— Ստանձնել հրամանատարութիւնը։

Օֆիցերը վազեց դէպի շարքի ծայրը, ուր լաֆետի նախանիւների ետեւ՝ այլ վիրաւորների մէջ պառկած էր վիրաւորված ֆէլդ-ֆեբելը։

— Չորս հրանօթները գործադրութեան մէջ. ամուր պահել դիրքերը։

— Երկա՞ր արդեօք,—հարցրեց օֆիցերը։

— Մի առ ժամանակ. թւում է, որ վաշտի գլխաւորը իր շտաբով սպանված է։

Մի փոքրիկ խումբ զինուորներով միայն մնացած օֆիցերի սիրտը ճմլվեց թախծագին։

— Բոլորը առանց բացառութեան դէպի հրանօթները,—գոռաց նա, աշխատելով իր հաւժկու հրամանով խլացնել կռւի մռնչիւնը։

Այդ միջոցին թշնամու հետևակը սաստիկ մօտեցել էր, և նրա յարձակվող զինուորների ցնծագին աղաղակները հնչեցին շատ մօտից։

Մնում էր առանց մի քայլ նահանջելու պատուաւոր կերպով կատարել պարտքը։ Հրանօթները կրակում էին անընդհատ։

Աջ կողմից յանկարծ լսվեց մի անօրինակ խուլ աղմուկ։

— Շրջապատված ենք,—գոռաց նա պառկած ֆելդֆեբելին հարցական կերպով։

Դա դրական նշան արաւ գլխով։

Իսկ հակառակորդ հետևակի մութ զանգուածները փրփրադէզ հեղեղի նման գալիս էին դիմացից։

— Ռազմական լծի սարքերն չայտեղ,—գոռաց օֆիցերը։

Տրվեց ազդանշան, մի րոպէ չանցած ռումբերից փրփրված դաշտի վրա ընթանում էին լաֆէտային նախանիւները։

Հեռւում, մի բարձրութեան վրա մովող կռւի մի կողմում կանգնած էր զօրախմբի հրամանատարը, որ հեռադիտակը աչքին ուշադրութեամբ հետեւում էր բոլոր անցուդարձին։

— Ինչու մարտկոցը չէ նահանջում,—գոռաց նա բարկացած։

Տալով նահանջի հրամանը, նա մի անգամ ևս ուշադրութեամբ նայեց այն կողմը և կանգ առաւ խօսքը կիսատ։

— Չափազանց ո՞ւշ է, ինչ ուզում է թող լինի,—վերջացրեց նա խօսքը՝ շարունակելով հետախուզել դիտակով։

Երիտասարդ օֆիցերի հրամանով՝ թշնամու պայթող ռումբերի կարկուտի տակ թնդանօթները կապեցին նախանիւներին։ Ինքը հենց ցատկելով առաջին իսկ հանդիպած ձիու վրա գոռաց։

— Մարտկոց, շարքեր, առաջ։

Ասպանդակված ձին տարաւ իր հեծեալին ուղիղ թշնամու առաջին շարքերի վրա, իսկ նրա ետևից ռումբերով փրփրված դաշտի վրայով գալիս էին իր հրանօթները՝ վրան նստած ծառաներով։

Ընկնելով յարձակվող թշնամու շարքերի մէջ, նրանք, օրպէս ռազմի օգնիկներ, մրրկի նման անցան նրանց միջով և նոյն կատաղի վազքով բարձրացան հարևան բարձրութեան վրա։

— Կանգնել, կրակել հետևակի վրա,—գոռաց օֆիցերը։

Շշմած թշնամին ուշքի եկաւ և դառնալով նրանց կողմը՝ սուինի դիմեց։

Թելագրածի պէս գործում էր երիտասարդ օֆիցերի հրամանն. լցվում, ուղղվում և կրակում էին հրանօթները թշնամու վրա, որի շարքերը նոսրանում էին և արդէն ակնել էին նուազ էներգիայով յարձակվել։

Այդ միջոցին, մի քանի ժամ առաջ թշնամու անօգուտ հարուածներից նահանջելու հարկադրված հետևակը նորից ոյժերը հաւաքած, իր հերոս մարտկոցի (և իր հերոս օֆիցերի) կրակով պաշտպանված յարձակվեց շփոթված թշնամու վրա։

Սպառելով իր վերջին ռումբը, երիտասարդ օֆիցեր խորին բաւականութեան զգացումներով տեսաւ իր մարտկոցի կրակով պաշտպանված առաջ սլացող հետևակը։

Զօրախմբի հրամանատարը, որի հայացքից չէր վրիպել ոչինչ, գոռաց.

— Ահա այդ կարիճը ազատեց նրանց,—և իսկոյն տալով մի հրաման, առանց ուշացնելու ուղարկեց նրան։

Իսկ երիտասարդ օֆիցերն հանդարտ կանգնած էր իր լաւ թնդանօթներից մէկի մօտ և ուշադրութեամբ դիտում էր ներքեւում զարգացող կռիւը իրանց յաղթանակող հետևակի, որովհետեւ չէր հրամայված նահանջել մարտկոցին։

Թարգմ. Թ. Իսկէնդէրեան

սած»: Այս կերպով հայն ու քիւրդը կենդանի էին մնացել:

Քանի որ հայն ու քիւրդն իրար հետ եղբօր պէս էին ապրում, նրանք «երկու գլխանի» մարդ էին ու ոչ մի «մարդակեր» նրանց չէր կարողանում ուտել: Երեք հազար տարի հայերի ու քիւրդերի եղբայրութիւնն ամուր էր: Այն օրից, երբ թշնամին հային կտրեց, հայի արմատը կտրեց, քիւրդերի հերթն է եկել:

Պատուաւոր աղնիւ, մի օր քիւրդերը կը տեսնեն, որ ես ճշմարիտ եմ ասում, դու այն ժամանակ կը տեսնես, որ ես քիւրդերի եղբայրն ու բարեկամն եմ. միմիայն նեղ օրվանը ինձ ճանաչէք:

Կրէվի Կայսերական ու Վլադիմիր համալսարանի պատուարժան պրօֆէսոր պետական իսկական խորհրդական՝
Սօլօմօն Եղիազարօվ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի վաճառականական կօմիտէն Կ. Հայկ. Կենտ. Կոմիտէին յօգուտ գաղթականների նուիրաբերել է 700 կտոր զանազան տաք իրեր, որոնց թւում վերմակներ, դօշակներ և բարձեր:

—

Փախստականների վիճակը ուսումնասիրելու համար Երևան մեկնեց մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ և Րօմանօվեան կօմիտէտի գործավար կամերհէր Նիկիտին: Նրա հետ մեկնեց և Մեալօպ եպիսկոպոսը:

—

Քաղաքների Միութեան Իգդիրի կօմիտէտը որոշել է գաւառում բանալ մի քանի ֆելդշերական կէտեր, մնդգատու կայան, և ջրերի պահեստ: Որոշել է նաև ձմեռը փախըստականներին տեղաւորել յարմար վայրերում: Կօմիտէտը իր այս որոշումների մասին յայտնել է Միութեան կովկասեան ճիւղի լիազօրին:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

Հայ Գիւղատնտ. և Տնայն. Ընկ. միջնորդել է Կաթողիկոսի առաջ «Եղբայրական Օգնութեան» գումարներից նպաստ յատկացնել Ալաշկերտի հովտի արտերը ցանելու համար: Կաթողիկոսը խոստացել է առաջին պահ՝ ալաշկերտցիների սերմացուի կարիքի համար բաց թողնել 30,000 ռ.:

Վաղը, նոյեմբերի 14-ին Թիֆլիսում գումարվում է Քաղաքների Միութեան կովկասեան ճիւղի նիստը, որտեղ պէտք է քննվեն ճիւղի լիազօր Ալ. Խատիսեանի զեկուցումը փախստականների դրութեան և Քաղաքների Միութեան նրանց ցոյց տուած օգնութեան մասին. նաև կօմիտէտի անդամներ Իւ. Թամամշեանի և Պ. Դօլուխանեանի զեկուցումները Միութեան կովկասեան ճիւղի ռազմաբեմում ունեցած հիմնարկութիւնների գործունէութեան մասին: Բացի այդ՝ պէտք է քննվեն ճիւղի հիմնարկութիւնների առաջիկայ տարվայ նախահաշիւները:

«Кавказъ»-ը հաղորդում է, որ նոյեմ. 10-ին Մցխէթում յանկարծամահ է եղել երկրագործութեան դեպարտամենտի աւագ մասնագէտ կենդանաբան Կ. Ա. Սաթունինը: Հանգուցեալը լաւագոյն մասնագէտ էր համարվում ոչ միայն Ռուսաստանում, այլ և արտասահմանում, որպէս կաթնակեր անասունների, առանձնապէս խժռողների վիճակագրութեան վերաբերմամբ:

Առանձին խորհրդակցութեան սեկցիաների նախագահներ են ընտրված. պարենաւորման սեկցիայի նախագահն է Ալ. Խատիսեան, բնակարանային՝ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ և տրանսպորտային՝ Միք. Զաքար: Բնակարանային սեկցիան երէկ վերջացրեց իր աշխատանքները:

Քաղ. վարչութիւնը հաղորդեց Նահանգապետին, որ Կաշչենկոյի ֆիրմային պատուիրած 146 վագոն ալիւրից 126 վագոն մնացել են չը բեռնված, և խնդրում է, որովհետև այդ ալիւրը վաճառելու պայմանները ձեռնտու են քաղաքի համար, և ֆիրման կարող է ամեն օր 6 վագոն ուղարկել, այդ վագոնները կցվեն Թիֆլիս եկող գնացքներին:

Նոյեմբերի 11-ին Թիֆլիսում ստացվեց 11 վագոն ալիւր: Ինչպէս լսում ենք, ալիւրի ստացումը առ այժմ կանոնաւոր կը լինի մի քանի օր, իսկ այնուհետև կանվեն հարկաւոր կարգադրութիւնները:

Յիշեցնում ենք, որ այսօր Գրական-Գեղարվեստական Սալօնում, երեկ. ժամը 8-ին, տեղի կունենայ պրօֆ. Մ. Խաչատեանի դասախօսութիւնը «Ազգային իդէալը» վերնագրով:

Նոյեմբերի 11-ին կայացաւ ժողովրդական համալսարանների ընկ. վարչութեան ժողովը, որտեղ որոշվեց մասնակցել Մոսկվայում դեկտեմբերի սկիզբներին կայանալիք ժողովրդի ընդհանուր կրթական համագումարին, ուղարկելով իր ներկայացուցիչը:

Այսօր, նոյեմբերի 13 ին, կը կայանայ Թօքմախի դէմ կռւող Կովկասեան Ընկ. ժողովը:

Անցած շաբաթ առևտրի և արդիւնաբերութեան ուսումնական մասի շրջանային վերատեսուչ Վերխօվսկին այցելեց Նիկ. Աբրահամեանի հաշուապահական դասընթացքները և ներկայ եղաւ հաշուապահութեան դասերին:

Ստացանք «Նոր ուղի» ամսաթերթի V—VI գիրքը, 192 էջ. գինն է 25 կ.: Զուտ արդիւնքը յատկացվելու է որբերի օգտին:

Վրաց «Գանաթլէբա» ընկ. որոշել է կանանց սեմինարիա բանալ Թիֆլիսում:

Նոյեմբերի 12-ին № 40-դ հիւանդանոցն են մտել հետևեալ հիւանդները. տիֆով 2, սկարլատինով 3 և դիֆթերիտով 3: Այժմ հիւանդանոցում մնում են հիւանդ սկարլատինով 130 հոգի:

Վաղը, երեկ. ժամը 8-ին, Հասարակական ակումբում Մ. Աւդէեվ կարդալու է մի դասախօսութիւն հետևեալ թէմայով՝ «Կենսամթերքի ճգնաժամը Անդրկովկասում»: Դասախօսութիւնից յետոյ կը լինի զրոյց:

—

ԿՈՎԿԱՍ

Փոխարքայի թոյլտւութեամբ նոյեմբերի 26-ին Գրօզնայում գումարվելու է Թերէքի նաւթարդիւնաբերողների XXI հերթական համագումարը:

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Պետրօգրադում, փախստականների խնդրով զբաղվող առանձին խորհրդակցութեան մէջ քննվեց փախստականներին վարձատրութիւն տալու օրինագիծը: Վիճաբանութիւնների մէջ մատնանշվեց, որ գալիցիացիներին վարձատրելը՝ նրանց կրած վնասների համար՝ հանդիսանում է արդարացի, որովհետև Գալիցիան գրաւվեց և այնտեղ մտցվեց ռուսական քաղաքացիական վարչութիւն: Պալաշևնեանը մատնանշեց, որ այդպիսի դրութիւն ստեղծվում է նաև արևելքում:

Պերմի հարուստ Մէշկովը խոստացել է նուիրել կէս միլ. ռուբլի, եթէ Իւրիևվի համալսարանը փոխադրվի Պերմ: Քաղաքն իր հերթին համալսարանին զիջում է նահանգական վարչութեան նոր ահագին շէնութիւնը: Իւրիևվի համալսարանի պրօֆ. Պոկրօվսկին, դիտելով շէնութիւնները և զէմստվային հսկայական հիւանդանոցը, համալսարանի փոխադրութիւնը Պերմ ցանկալի գտաւ:

Ճանապարհների հաղորդակցութեան նախկին մինիստր Ռուխլօվը համաձայնել է ստանձնել Վլադիկավկազի երկաթուղու կառավարչի պաշտօնը:

Պետրօգրադի շրջաններում խուզարկութիւնները շարունակվում են՝ զինւորակոչի ժամանակ զեղծումներ կատարող անձանց երևան հանելու նպատակով: Զինուորակոչական առեանից տարված են շատ թղթեր:

«В. В.»-ն հաղորդում է, որ Պետական Դուման բացվելու է նոյեմ. 25-ին կամ 27-ին: Առաջին նիստում հանդէս կը գայ արդարադատութեան մինիստր Խվօստօվը: Այդ դեկլարացիայի մէջ կը շօշափվեն ներքին քաղաքականութեան հարցեր: Ֆինանսների մինիստր Բարկը կը շօշափէ ֆինանսական և տնտեսական բնոյթի հարցեր: Կառավարութիւնը առաջին հերթին կը դնէ թանգութեան խնդիրը, որի առիթով արդէն մշակել են օրինագծեր ներքին գործերի և առևտրի մինիստրները: Բիւջէի քննութիւնը սկսելու է երեք շաբաթ:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ռուսաց դերաս. խումբը նոյեմբ. 11-ին ներկայացրեց իշխան Սումբաթովի «Դաւաճանութիւն» պիէսը, մասնակցութեամբ տ. Ժիւխարէվայի, որ կատարում էր Զէյնաբի դերը: Պէտք է ասել, որ Թիֆլիսում մինչև այսօր թէ ռուսական, թէ հայկական և թէ վրացական բեմի վրա ներկայացված «Դաւաճանութիւնը» ոչ մի անգամ այնքան լաւ անսամբլով, ճոխ դեկօրացիաներով չէր ներկայացված, ինչպէս այժմ: Թէ տ. Ժիւխարէվան (Զէյնաբ), թէ տիկ. Մրավինան (Գոյխանէ), թէ պ. պ. Վօլմայր (Սուլէյման խան), Լիւբիմով—Լանսկօյը (Օթար-բէգ), Ներատօվը (Անանիա), Օրոլենսկին (Դատ), Վասիլենկօն (Էրակլէ), տ. Վասիլչէկօվան (Րուկայա)—ամենքն էլ իրանց կոչման բարձրութեան վրա էին և գեղեցիկ կերպով տարան իրանց դերերը, այնպէս որ, չը նայելով որ ներկայացումը տևեց մինչև ժամը $12^1/_2$-ը, թատրոնը ծայրէ ծայր լցված հասարակութիւնը մեծ հետաքրքրութեամբ և անձկութեամբ դիտում էր ներկայացումը:

Մենք ստացանք շատ հաճելի տպաւորութիւն այդ ներկայացումից, որ կրկնվեց երէկ երեկոյեան ևս: Հ. Ա.

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

«Սամսոն և Դալիլա» օպէրայի երկրորդ ներկայացումը Արքունական թատրոնում նոյեմբերի 11-ին նոյնպէս անցաւ աջող, շնորհիւ տ. Րշբըլնսկայի, պ.պ. Պոլէտաևի, Մոսինի, Շվէցի և Նիկօլսկիի:

Այսօր այս սէզօնում առաջին անգամ կը տրվի ուրախ «Սէվիլեան սափրիչ» օպէրան:

Վաղը Արքունական թատրոնում կըրկնվում է «Հրէուհին»:

Արտիստական թատրոնում վաղը երրորդ անգամ կը ներկայացվի «Դաւաճանութիւնը» յայտնի դերասանուհի Ժիւխարէվայի մասնակցութեամբ (Զէյնաբ-խանում):

Այսօր Արտիստական թատրոնում յօգուտ կանանց բարձր դասընթացքների փոխադարձ օգնութեան գանձարկղի դրամ. խումբը կը ներկայացնէ «Պիգմալիօնը»:

ՄԱՄՈՒԼ

«Մշակի» անցեալ համարներում մենք առաջ էինք բերել վրաց մամուլի մի մասի՝ Թիֆլիսի քաղ. ինքնավարութեան առաջիկայ ընտրութիւններին վերաբերեալ յայտնած կարծիքը և արած դիտողութիւնները: «Թանամէդրովէ Ազրի» լրագիրը, որ կողմնակից է և պաշտպան դեմոկրատ սկզբունքների, իր «Քաղաքային ընտրութիւնները և նացիոնալիստները» վերնագիրը կրող խմբագրական յօդուածում ի միջի այլոց ասում է.

Քաղ. ընտրութիւնների մօտենալը շարժում է առաջ բերել զանազան խմբակցութիւնների մէջ. Հանգիստ կերպով զբաղում է սօցիալիստների պարտիան, կարի է պատրաստվում օպպօզիցիան: Սակայն առաջինին կարիք չը կայ գլուխ կոտրատելու. նա խոշոր ցենզաւոր ընտրողների մօտ արիւնն է և, կարծում ենք, ոչ էլ երբևիցէ դաւաճանել է նրանց շահերին: Ուստի նա ապահով է, որովհետև պլուտոկրատիան գոհ է նրանից: Սակայն այսօր մենք ապրում ենք առանձնայատուկ պայմանների մէջ:

Լրագիրը կանգ առնելով պատերազմի շնորհիւ ստեղծված պայմանների և տիրող թանգութեան, այլ և քաղաքային ինքնավարութեան այդ ասպարէզում ցոյց տուած աննդունակութեան վրա՝ բնական է համարում, որ ազգայնականութիւնը, դժգոհ լինելով ներկայ կազմից, բուռն կերպով աշխատէ նոր ուժեր ասպարէզ հանելու, որը իր դէմ է ընդդիմադիր ուժ:

Այս վերջին դէպքում,—շարունակում է լրագիրը,—սօցիալիստներն ունեն այդ հընարաւորութիւնը:

Թիֆլիսը բազմացեղ քաղաք է, բայց խոշոր ցենզաւորների մեծամասնութիւնը հայերն են այստեղ և, քաղաք. ինքնավարութիւնն էլ ներկայիս գտնվում է նրանց ձեռքում: Սօցիալիստների պարտիան հայ բուրժուազիայի ազգային խմբակցութիւնն է: Դրա համար էլ այդ խմբակցութեան դէմ ուղղված ամեն մի օպպօզիցիա սօցիալիստների փորձառու ղեկավարները մկրտում են հակահայկական անունով և օպպօզիցիային էլ համարում հայերի դէմ գնացող կօալիցիա: Եւ այդ շատ և շատ ձեռնտու է նրանց համար: Եթէ հայ ժողովրդին հաւատացնեն, որ սօցիալիստները պաշտպանում են սրա իրաւունքները և հէնց դրա համար էլ կռւում են սօցիալիստների դէմ, ի հարկէ յաղթութիւնը կը լինի դրանց կողմը: Եւ դրա համար էլ աշխատում են հաւատացնել հայ մասսային, որ այսօրվայ մեծամասնութեան դէմ գնացողներն ուզում են կռւել ոչ թէ մի յայտնի սահմանափակ խմբակցութեան դէմ, այլ հայերի դէմ:

Հայերի դէմ կռւում են, պաշտպանեցէք հայերին. ահա քաղաքային ինքնավարութեան մէջ բազմած պլուտոկրատիայի փորձած լօզունգը: Կուլը նա այժմս էլ նոյն լօզունգով է առաջ մղում, որը և հնարաւորութիւն է տալիս նրան հեշտ կերպով իր շուրջը հաւաքել հայ ընտրողներին և դրա հետ միասին գրաւել նաև հայ մասսայի համակրութիւնը: Սակայն արդեօք կա՞յ արդեօք որևէ ընդհանուր սօցիալիստների գործունէութեան և հայ ժողովրդի ազգային շահերի միջև ի հարկէ ոչինչ չը կայ... Քաղաք. ինքնավարութեան անհոգութեան շնորհիւ քաղաքի տնտեսապէս հետ մնալուց հասարակապէս տուժում և վնասվում են բոլորը, ինչպէս վրացիները, ռուսները և թուրքերը, նոյնպէս հայ քաղաքացիները: Անհնար մեծամասնութիւնը, բացի անձնականապէս շահագրգռված մի նեղ խըմբակից:

Հետևապէս, ինքնավարութեան վերանորոգութեան գործում բոլորն էլ պէտք է շահագրգռված լինեն և սօցիալիստների փոխարէն ընտրեն այնպիսի անձանց, որոնք կը լինեն քաղաքի իսկական ու սրտացաւ տէրերը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, 3 նոյեմբերի

«Մշակի» № 239-ում կարդացի պ. Իշխանեանի նամակը. պարոնը կարծում է, որ ես «Գաղթականները աշխատել չեն ուզում» իմ յօդուածում («Մշակ» № № 231 և 232) իրան համարում եմ գաղթականներին ծուլութեան մէջ մեղադրող: Սա իսկապէս մի թիւրիմացութիւն է: Իմ բոլոր ասածները վերաբերվում են գաղթականներին մեղադրողներին, նրանց հասցէին «վճռոններ արձակողներին», բայց ոչ պ. Իշխանեանին: Հէնց իմ յօդուածի սկզբում պարզօրէն ասել եմ. «Նա (իմա պ. Իշխանեանը» իբրև փաստ արձանագրում է (ընդգծումները իմ են. Ս. Ո.), որ ինքը Վաղարշապատում շարունակ գանգատներ է լսել գաղթականների հասցէին»: Իմ յօդուածի մեկ կէտը, որ ուղղակի պ. Իշխանեանին է վերաբերվում, հետևեալն է. «Եթէ մի վաղարշապատցի մեղադրէր գաղթականներին ծուլութեան մէջ, մենք դրան այնքան էլ ուշք չէինք դարձնի, բայց երբ տեսնում ենք, որ վաղարշապատցու ասածներին նըշանակութիւն տալով պ. Իշխանեանի նման մէկը պարտք է համարում մամուլի էջերում զետեղել նրա գանգատները, այդ մեզ իսկապէս ցաւ է պատճառում»: Ուրիշ ոչինչ:

Որ ես պարոնին լաւ եմ հասկացել և կարողացել եմ պաշտպանել նրան գաղթականների դատախազներից, այդ երևում է ցայտուն կերպով իմ յօդուածի երկրորդ մասից (№ 232), որտեղ ես մի ամբողջ պարբերութիւն վերջացնում եմ հետևեալ խօսքերով. «Գաղթականների կրածն իրանց հերիք է. ինչպէս պ. Իշխանեանն է ասում, ներելի չէ դատավճիռներ արձակել անօրինակ ողբերգութեան մէջ տառապող դըժբաղդ զոհերի հասցէին»:

Ինձ թւում է՝ այժմ հարցն այնքան պարզ է, որ նրա վերաբերմամբ այլ ևս երկու կարծիք գոյութիւն ունենալ չեն կարող: Ամենայն հաւանականութեամբ, պ. Իշխանեանը իր նամակը գրել է նախ քան «Մշակի» հետևեալ օրվայ համարում իմ յօդուածի շարունակութիւնը կարդալը. պարոնը այժմ տեսնում է, որ ես նրան «անիրաւացի միտումներ» վերագրելուց շատ հեռու եմ:

Չը մոռանամ ասել, որ միանգամայն չեմ ընդունում պ. Իշխանեանի հետևեալ տողերը. «Պ. Ոսկերչեանը չէ հերքում և ընդունում է, որ նման դէպքեր (այսինքն գաղթականներին առաջարկվել է 1 ր. 20 կ. և 1 ր. 50 կ. օրավարձով աշխատել, և նրանք հրաժարվել են. ծան. Ս. Ո.) յաճախ են տեղի ունենում»: Այո, ես բացէ ի բաց չեմ հերքել, բայց և չեմ ընդունել, չեմ ասել մանաւանդ, թէ նման դէպքեր յաճախ են տեղի ունենում: Ահա այդ առիթով իմ գրածը. «Գուցէ այդպիսի դէպքեր եղել են, դրանք մեզ յայտնի չեն, բայց մենք գիտենք դէպքեր, երբ ուզեցել են գաղթականներին սովորականից աւելի ցածր գնով աշխատեցնել, և վերջիններս շատ անգամ մերժել են»:

Ես վերջացրի. պ. Իշխանեանի գրածները ճիշդ եմ հասկացել. կուզէի, որ նա էլ իր հերթին «բարեխիղճ ընթերցողի վերաբերմունք ցոյց տար դէպի իմ գրածները»:

Ս. Ոսկերչեան

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐ.

Նոր-Նախիջևան, 3 նոյեմբերի

Վանի Խաչ փողոցի բնակիչ Մկրտիչ Ջրուանդեանի մասին տեղեկութիւն ունեցողներին խնդրվում է հաղորդել Նոր-Նախիջևան, Եկեղեցական Ազգաշինում Հոգաբարձութեան (Нахичевань на Дону, Церковному Попечительству).

Կօմիտէտի անդամ՝ Ց. Բողդանեան

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բորժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բորժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ՝
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—$12^1/_2$ ժ. վեներականութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:
Բ. Գ. ՍՂԱՍԱՐԵԱՆ—$9^1/_2$—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծննդաբ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի կոկորդի և քթի հիւանդութ.:
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՑԵԱՆ—12—1 ժ. երկրչ., հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծննդաբ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—196

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ЗАПОРЪ
КАТАРРЪ ЖЕЛУДКА
ГЕМОРОЙ
ИЗЛѢЧИВАЕТЪ РАДИКАЛЬНО, ИСКЛЮЧИТЕЛЬНО
Пилюли „КАТАГЕМО"
М. ДЕЛАМУРЕ.
ПРОДАЖА ВЪ ЛУЧШИХЪ АПТЕКАХЪ И ВЪ АПТЕКАРСКИХЪ СКЛАДАХЪ.
ИСКЛЮЧИТЕЛЬНЫЙ СКЛАДЪ ДЛЯ ВСЕГО КАВКАЗА
ЛАБОРАТОРІЯ М. ДЕЛАМУРЕ ТИФЛИСЪ
ЭРИВАНСКАЯ ПЛ. ПУШКИНСКАЯ 3.
ВЕРХНІЙ ЭТАЖЪ
762. 50—7 (Ն. ու.)

ՀՐԱՒԷՐ

Համաձայն կարգադրութեան հոգևոր իշխանութեան հոկտեմբերի 29-ից, 1915 թ., № 747, Թիֆլիսի ս. Նշան եկեղեցու ծխականները հրաւիրվում են ամսիս 15-ին, առաւօտեան ժամը 12-ին, նոյն եկեղեցու հրաժարված Ե. Թավարքեզեանի փոխարէն ընտրելու նոր երէցփոխ:
Միւթան ս. Նշան եկեղեցու՝
Գրիգոր ք. Տէրմազանեան
817. 1—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է
Հայ դաստիարակչուհի,
Ցեմանեան կամ Գայիանեան դպրոցներն աւարտած, երկու երեխաների համար: Հասցէն՝ Սուդէբնայա փող. № 33, բնակ.
823. Առատխանեան: 1—1

Նպաստամատոյց Ընկերութեան գրասենեակում վաճառվում են
ՅՕԳՈՒՏ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Линчъ—Арменія շեղ հր. 2 հատ. գ. 18 ր.
1906 և 1909 թ.թ. Գեղունի, շեղ հրատ. 3 ր.
Բժ. Վ. Արծրունի—Պատրանք, վէպ. 1 ր.
» Մատնիչ, պատմուածք 40 կ.
Շիրվանզադէ—Ցաւազարը եւ չնուղի ականջը, պատմուածքներ (հեղինակի կենսագրութեամբ և պատկերով). 50 կ.
» Փողոված երկերի I, II, III, և IV հատոր ամեն մինի գինն է 1 ր. 50 կ.
М. Алавердянъ—Идеологи освобожденія турецкихъ армянъ 40 к.
Ив. Гнуни—Мотивы армянской поэзіи 40 к.
Ив. Саркисянъ—Армянск. литература 60 к.
Վարդան Քամալեան—Հայաչանք (երկրորդ տպագրութիւն) 30 կ.
Բ. Իշխանեան—Գերմանիայի եւ Թիւրքիայի տնտեսա քաղաք. փոխ. յարաբերութիւնները 25 կ.
Նապօլեական պատկերներ հատը 50 կ.
Գր. ա.-ք Մանդակունի—Հանրամատչելի բժշկարան (բժշկապետ Րէստէնի բժշկարանից կազմած): 1 ր.
Ս. Դոնիբէ Բէկ—Կանանց հարցը 20 կ.
Ա. Քրիմիեան—Վարդավառ, գր. 3 արտպուածով. 20 կ.
Զարքաջ—Ջատկական զաւնը 10 կ.
Ա. Աթայեան—Սիրոյ նովիտը 3 կ.
Ցիշեալ բոլոր հրատարակութիւնները միասին պահանջողներին կը լինի զեղչ 25%:
Մինչև 1 ռուբլի գումարի գրքերի ճանապարհածախսը Ընկ. վրա:
Դիմել՝ Тифлисъ, Обществу Вспомоществованія на случай бѣдствій «НПАСТАМАТУЙЦЪ» (Соломоновская, 21).
(օ. մ.) 244. 15—5

Դ. ԱՂԱՅԵԱՆ
ՈՒՍՈՒՄՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ
Գ. մասը լոյս տեսաւ և վաճառվում է:
815. Գրքի պահեստը գտնվում է «Գիր» գրավաճառանոցում: 2—2

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձինի, I և II հատորներ . . . . . 1 ր. 50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի . . . . . 40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. . . 1 ր. 20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի . . . . . 40 կ.
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ . . . . . 15 կ.
6) ՋԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. Առաքելեանի . . . . . 50 կ.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքած., Վ. Մալէզեանի . . . . 1 ր.
8) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի . . . . . 40 կ.
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վիպագրութիւն), Ստ. Մալխասեանցի . 40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի 35 կ.
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՑԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով . . 15 կ.
12) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ. Մ.-ի . 15 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի 30 կ.
14) ԳԱԼԻԼԷՑԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի 25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՇԱՆՔ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուդարեանի 80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ. . . . . . 1 ր. 50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միւլլէրի, Թարգմ. Իս. Ցարութիւնեանի. . . . . . 40 կ.
18) ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եզեկեանի. . . . . 15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII. . . . . . 20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԸ, ԹՈՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շխեանի 20 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շխեանի . . 25 կ.
22) ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊՐՕԲԼԷՄԸ, Բ. Իշխանեանի . 20 կ.
23) ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ՖԻՆԼԱՆԴԻԱՅՈՒՄ, Գ. Տէր-Ռաւբինեանցի . 10 կ.
24) ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՈՒ ՄԵԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Զիթենցի . . . . 3 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա: Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%. (6) 0—3

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.